

„Droschak”

ORGANE

de la Fédération

Région Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԸՆԿԱՆ ԴԱԼՆԵԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԴԻՆԵ

ՎՃՐԵԿԱՆ ԺԷՄԸ

ՀԵ ԽՈՍՀՆՔ այլ ևս մարդասիրութեան, ալտրուիզմի, քաղաքակրթութեան մասին, չ'օրօրւինք այլ ևս սին ու պատիր յոյսերով, հզօրների մարդասէր՝ աջակցութեան խոստումներով. շահ է չոր աւետարանն է ղեկավարում ամենքին, թէ մեր ոհամակիրը և թէ ոթշնամի պետութիւններին. համակիրը վաղւան օրը կարող է դառնալ հակառակորդ: թշնամին կարող է դառնալ բարեկամ: Աշխարհը—ուժին է, բիրու ու վայրագ ուժին... Այն մի բանի զինւած, ինքնապաշտպան խմբերը, այն մի շարք յաղթական գրուները բարբարոս խուժանի գէմ՝ աւելի արժեն, քան տասնեակ *démarche*-ներ, յիշտափագիրներ, ուղերձներ: Ուժն է, որ վերջին հանգրւանի մէջ թելադրում է իրաւունքի նւիրական պահանջները և եթէ կամենում ենք մեր տրորւած ու գարաւոր իրաւունքը լսելի անել հզօրներին, պարտաւոր ենք ոյժ կազմել: — մի ոյժ, որ էապէս խաղաղասէր է, ժիառող արիւնի ու բռնութեան, բայց մի ոյժ, որ գիտէ, ընդունակ է ի հարկին պատշար կանգնել իրաւունքին, իրագործել իրաւունքը, խոռվելով մշտապէս դիւնաշէնեների եսապաշտ և իրապաշտ հանգիստը...

Այդպէս է շշնջում հայոց խուլ ականջներին ամենօրեայ իրականութիւնը, այդպէս են թելադրում իրենք իսկ դիպոմատները և նրանց հետ՝ հայութեան բարեկամները: Այդպէս ենք բարողել մեր արդարութիւնը և առաջ բարունին են ըմբռնել այ ժաշւած ու հետևակ ճշմարտութիւնը: Զե՞նք կրկնուի րդեօք 1878-ի ազէտաւոր դրաման: Զե՞նք արդեօք նոյն պայտէ շերեփով, նոյն ունուն անդրամանքով մեր արդար իրաւունքի կիրար արդեօք մոռանում հոգսերից արդեօք մենամեծը և ամենահրամանաւութիւնը, որ բանից մուշի մէջ.. այն գործոն եան գրաւականն է... Նը իրագործած է միայն

ու միայն գիւան ագիւասկան ձեռնարկների ու թղթերի շուրջ...

Այդ էլ բան է, կ'ասեն ոմանք: Շատ քիչ բան է— կ'ասենք մենք—և այդ կիսատ, հիւանդոտ, կրաւորական համերաշխութիւնը արգեն իսկ ողբալի մի նշան է քաղաքական անչափահասութեան և թերևս նախօրօք դատապարտած վիժումի...

Հայ բուրգուազիան, թեւաւորւած մի բանի դահլիճների վերապահու խոստումներից, հրապարակ է հանել մարդիկ ու ծրագիրներ, ուրուագծել է մի բանի ձեռնարկներ այս ու այն մայրաքաջաբում և յոյս ունի (ունի արդեօք), որ հայոց ու ֆորմները պիտի իջնեն մանանայի պէս դիւանագիտական երկնբից:

Դիւրին բան... գործելու աժանագին ճանապարհ, որ չի բնաւ հարւածում գրպանին, չի պահանջում առանձին զոհողութիւն. բայց փորձեցէք խօսելու այդ ազգասէր պարուներին, այդ հարուստ, պերճանքի մէջ խեղուող զաղութներին՝ երկրի, ժողովրդի ամենահրատապ ցաւերի մասին, փորձեցէք հասկացնելու այդ անգայի, մամօնապաշտ հոգիներին, որ ժողովուրդը կարօտ է ինքնապաշտպանութեան միջոցների, որ առանց դրան՝ բոլոր ազգաշէն ծրագիրները աւազի վրայ կառուցւածքներ են... Ապարդիւն: Փոքրաթիւ, անհատական բացառութիւներով, հայ ունելոր գասակարգը, ազգի պաշտպան, խնամակալ գասակարգը, նոյն բարացած և եսապաշտ գոյութիւնն է, ինչ որ նախնի օրերում նէ մի նշան միսիթարական, գրեթէ ոչ մի յառաջդիմութիւն 1878-ի օրերից ի վեր...

Մենք չենք, որ պիտի ժխտենք „դիւանագիտական միջոցների” գատակարութիւնն ու այժմէութիւնը նրանք ոչ միայն օգտակար են, այլ և անհրաժեշտ:

Անհրաժեշտ են, բայց բաւական չեն: Նրանք չեն տալիս պատասխանը մեծ, ահաւոր հարցումի: Ի՞նչ կը լինի հայ ժողովրդի վիճակը Աւաղը, երբ այդ բոլոր դիւնագիտական ձեռնարկները կը վիժին, խաղալ լուծման երազները կը խորտակին և գժբախտ հայաստանցին կը մնայ նորէն մատնած արիւնարու հրոսակներին ու անխիղծ հայաջնիջ պաշտօնեւութեան...

Ի՞նչ կը լինի այդ ժողովրդի վիճակը, եթէ առաջիկայ գարնան, ընդհանուր վերիպարումի ահեղագոյն վայրէկանին, մարդասպան խաժամուժը, օգտւելով տիրապե-

ուաշտութիւնը, որ բանից մուշի մէջ.. այն գործոն եան գրաւականն է... Նը իրագործած է միայն

տող քաօսից, կենտրոնական կառավարութեան թուլութիւնից, անէացումից, կամ թէ նոյնիսկ այդ կառավարութեան աջակցութեամբ, Խրախուսանքով՝ փորձէ վերստին յագուրդ տալ վրէժինդրութեան ու աւերածի իր վայրագ ընազդներին...

Ի՞նչ... That is the question! Այդ է Փատար, չարա-
գուշակ, սարսափելի խնդիրը, բոլոր խնդիրների Խնդիրը
Այդաղ է, որ չարաշաբ կաղում է մեր ազգային հա-
մերաշնութիւնը, մեր կամքերի ու ջանքերի անհրաժեշտ
ներդաշնակութիւնը! Այդաղ է, որ հայ մարտիկը, կո-
տորող ժողովրդի թև ու թիկունք ֆեդային, ողբում է
իր ցեղակից և ունեող դասակարգերի անհիծակուռ ոռու-
տինը, Նրանց դաժան անտարբերութիւնը և քաղաքական
SENS-ի լիակատար բացակայութիւնը...

三

Պրօպագանդը Եւրոպայում ցանկալի է, դիմումները
ծրագիրներն ու օրգաններն անհրաժեշտ—և իւրաքանչ-
չիւր հայ անհատ ու խմբում պարտաւոր է իր բաժին
աղակցութիւնը բերելու գործի գլուխ կանգնած, զեկա-
վարող անհատներին ու օրգաններին Սակայն... նախ և
առաջ՝ ներելի է ցանկալ, որ կաթողիկոսական պատգա-
մաւորութիւնը կանգնած մեայ իր կոչման բարձրութեան
վրայ, որ նա խոդրի լիակատար ծանօթութեամբ և ինքնու-
րոյն, հաւաքարար առաջ տանէ իր փափուկ, պատասխա-
նատու պաշտօնը, ներկայացնէ եւրոպական արէօպագին
հայ ժողովրդի իրական պահանջները. ներելի է, մանաւանդ,
ցանկալ, որ դուռը իր հայագիր արբանեակներով չփորձէ
իր ապահանող ազդեցութիւնը տորածել հայկական
պատգամաւորութեան և նրա անելիք բայլերի վրայ...

Այդ ևս կացութեան վատանգներից մինն է. Նուրի-
ներն ու Արթինները անպահաս են Բ. Դրան մթնոլոր-
տում. ամեն անգամ, երբ օսմանեան կառավարութիւնը
յղացել է Հակահայ ծրագիրներ կամ փորձել է ի դերեւ
հանելու այս կամ այն հայանպաստ ծրագիրը, թող
փշելու Երրոպայի աշքերին իր ուրոյն ու պէֆօրմային
ծրագիրներով՝, իր ուղնդարձակ բարենորոգմանց՝ հա-
ւաստիքներով—գրեթէ միշտ նա ունեցել է իր տրամա-
դրութեան տակ՝ սիրայօժար, հաւատարիմ հայ ծառա-
ներ, որոնց և հրապարակ է նետել նեղն ընկած պա-
րագային Խրէկ արդէն մենք տեսանք այդ ծառաների
թատերամուտը սագրազամի կարինէում, ուր նրանք կանչ-
ւել եին—ում արդեօք յանձնարարութեամբ — իրենց
ոհնեղինակաւոր՝ կտրծիքները յայտնելու Հայաստանի
բարեկարգութեան մասին:

Բայց ամենէն ազդեցիկը և թերևս ամենէն վստահ հելին այդ հայտնիպ ծառաներից՝ գտնվում է նոյնիսկ կուռավարութեան մէջ, վարում է արտաքին գործոց նախարարի պաշտօնը. Նրա հետ է, որ Քեամիլը խորհրդակցում է Հայաստանի վիճակի մասին, Նրա ձեռքն

Է, որ պիտի արւի և վաղան ռէֆօրմերի ծրագիրը

Այդ արդը — որի խիզը նոյնքան առաջգական է, որքան իր մտաւոր կարողութիւնները սահմանափակ — դառնում է հետզհետք մի անախորդ բեռ Հայութեան խղճմատանքի վրայ՝ և անաւ տաղմուկ ու անպատեհութիւն չզգաց, ըստ երևոյթին, իր մինիստրական գերի մէջ, անգամ վերջին տագնապացի ամիսներում, երբ ամեն օր սուրբ Հանդակը բերում էր Հայաստանից բրդական նախաճիրների արիւնու մանրամասներ և կառավարական մեղսակցութեան բացայատ ապացոյցներ՝ նա եկել էր դիւանագիտական իր մեծահոչակ կարողութիւններով փըրկելու Տաճկաստանը (եւրոպական թիւրքիան կորցնելուց յետոյ՝ այժմ, անշուշտ, պիտի ջանայ պահելու ասիականը), բայց ամենից առաջ փրկել կուզէ իր սեփական պաշտօնը, որին նա կառչել է յամոռաբար, ինչպէս գուեհիկ մակաբոյչը կենդանական օրգանիզմին... Դիւանագիտի լուսապսակը չքացաւ և նրա տակ եւրոպական հասարակութիւնը տեսաւ միայն արևելցի մի փոքրիկ *chicaneur*—plus *tunc que le tunc*—որ անընդհատ պրօվոկատիօններով ու վրիպութերով գրդուեց յոյնին, սերբին, բուրգարին և ի վերջոյ զզւանք յարուցեց անգամ իր նախկին երկրպագուների շարքերում, իր ձախողակ կարիքին մէջ՝ Կորպատունկեան Եֆենտին պիտի կամենայ, անտարակոյս, նաև ողպէի փրկեց՝ լինելու տարածել իր աղդեցութիւնը անգամ դրսի գործիչների վրայ, լուծել տալ հայոց հարցը, ինչպէս իրեն է հաճելի և իր տիրոց—Քեամիիին:

Առաջին փորձն եղաւ այդպիսի լուծման—և վրիպեց
Ամբողջ հայութիւնը իր ցասկուտ արհամարհանքը միայն
յայտնեց օսմանեան դաշինքի բարենորոգչական խա-
բեութիւններին։ Առոյն վիճակին կ'արժանանան բոլոր նման
փորձերը բաւակա՞ն է, որը անզգը առառապել է ան-
ցեալի մէջ արիւնակից սորկամիտ, շահախնդիր պաշ-
տօնեաներից։ Մենք չենք թոյլ տար, որ նրանք նորէն
հրապարակ գան իրենց յոռի ազգեցութիւններով։ Եթէ
հայկական խնդիրը այս անդամ էլ պիսի թաղւի, ապա
գէթ խոյս պիտի տանք հայ տարը այդ թաղմանը
մասնակից անելու աղէտաւոր հեռապատկերից...

六

Անկախ, շիտակ և աշալուր գ դործունելովթիւն, առանց
ենթարկելու վատանգաւոր երջնչումների — այսպէս է
լինելու Եւրոպայի հայկական պատգամաւորութեան
բնոյթը և ընթացքը:

Եւրոպական այդ անհետ աշխատանքի հետ
զուգընթաց պէտք է երթա, որին ներքին աշխատանքը,
այն որ պէտք է օրինական աղջներով ապահովէ հայ
գիւղացու կեանքն ու պատի, ի պէ ժողովրդի
դիմադրական կարողութիւնը՝ պահանջաներից
բաճուն սպառնալիքների հետ սպառներից

շափականցրած ու վարդագոյն յօյսերից, խարէական ծանուցութերով չյուսագրենք ժողովրդին, չջլատենք նրա փրկարար ինքնօգնութիւնը ստախօս հեռագիրներով թէ իբր արդէն ինդիրը լուծման ձամբու վրայ է, թէ այս ինչ կամ այն ինչ պետութիւնը խոստացել է պաշտօնապէս յարուցանել այն՝ գեսպանական ժողովի մէջ... Յարարախտարար, չկայ դեռ այդ որոշումը և ոչ մէկ պետութեան կողմից, ամեն ինչ տակաւին անորոշութիւն է և պատրանք, որից գուցէ ապագայում կը ժայթքի ուրախառիթ ու կազդուրիչ իրականութիւնը... Առ այժմ խօսքը գեռ բրդին է, որ ուստական սահմաններից մինչև Շատախ ու Սասուն ճօճում է իր մարդաշինչ դաշոյնը, բառբառում է նոյնիսկ — ինչ որ խորհրդաւոր թելադրութեամբ, արտաքին ներշնչումով — ավտօնօս, ինքնավար Քիւրդիստանի մասին և ցոյց տալիս բռունցը իր հարեւան ովֆալամ... ին.. Անրջին մի շարք դիմադրական փորձերը հայերի կողմից — մի քանիսը հերոստական և ջախջախիչ — աւելի ևս մտածել են տալիս այդ բարբարոս հօրդաներին, որոնք բազ են միայն անդէն ու անպաշտպան զոհերի հանդէպ...

Այս ժանր օրերի մէջ ազգի բոլոր տարրերը — իրական, գործօն համերաշ խութեամբ — պէտք է որ համախմբւէին մարտական կազմակերպութեան շուրջը, աճեցնէին նրա վարկն ու հմայքը և նրա հետ միասին սիրութային յուսակտուր ժողովրդին, ներշնչէին վստահութիւն ու կորով.. Այդպէս է լինում շատ թէ քիչ ինքնաճանաչ, բաղաբակիրթ համայնքների մէջ Մեզ մօտ — հակառակն է Քարոզելով հանգերձ համերաշն գործակցութիւն խաղաղ, անվնաս ձեռնարկների ու ցոյցերի մէջ — մի կարգ մարդիկ շարունակում են իրենց քինոտ արշաւանքը կազմակերպութեան դէմ և նոյնիսկ... ցնծութեան ծափ են զարկում ինքնապաշտպանութեան այս կամ այն ծրագրի վիճաւան առիթով... Աւրիշները խնամքով ու եռանդով նկարագրում են երկրի մէջ կառարւող դիմադրական ճիգերը, մատնում են ռուսահայ անհատներին կառավարական ուշադրութեան, ներկայացնում են ինքնապաշտպան խմբերի առաջնորդներին, որպէս մի-մի Լանկ-Թամուրներ, որ նպաստակ ունին կոտորելու, կործանելու ժողովուրդը. Կարդացէք այն անլուր աղտաղութիւնները, որ հրատարակել էր վերջերս Ամերիկայի մի անպատի հայ օրգան... Դաւաճանի և մատնիչի ոճրանիւթ ուղեղը չէր կարող — ներկայ փափուկ, պատասխանատու օրերում — աւելի զաղիր շահատակութիւններ յշանալ... Սարսափելի է, որ այդ տեսակ գարշանքներ տպագրում են և արտատպում, չըջան անում մի յայտնի մամուլի մէջ Աւելի ևս սարսափելի է, որ տպագրւելուց յետոյ նրանք չեն յարուցանում զգւանքի ու ցասման փոթորիկ...

ԹԻՒՐՓԻԱ

ՈՒ Ֆ Ո Ր Մ Ն Ե Ր Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՑԱՍՏԱԽԻ ԲԱՐԵՆՈՐՈԴՄԱՆՑ ՆԻԱԶԱԳՈՅՑ ՆՐԱ ԳԻՐ, ՆԵՐԿԱՍԱՑԻԱԾ 1901 ՄԵԴԱ. 13-ԻՆ ՖՐԱՆՍԱՑԻ ԱՐՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ Պ. ԴԵԼԿԱՍԻՇ ԶԵՐԱՄԱՐ Պ. ՊԻԷՇ ՇԻՑԱՌԻ, ՑԱՆՈՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ.

1) Կառավեցում վիլայէթներու թւին (վերահաստատում հին սահմաններուն):

Տես. — 11 մայիս 1895-ի Յիշատակադիրը *):

2) Եւրոպական չէպոք ազգութեան մը պատկանող ընդհանուր կառավարիչ մը պիտի հաստատի հինգ տարւան ժամանակամիջոցի մը համար, հաւանութեամբը մեծ պետութեանց Այս ընդհանուր կառավարիչը պիտի վայելէ գործադիր իշխանութեան բոլոր իրաւասութիւնները: Պիտի հսկէ հանրային ապահովութեան ու կարգին պահպանման Պիտի գանձէ հարկերը, իր պատասխանատութեան տակ պիտի նշանակէ վարչային պաշտօնեանները: Պիտի հաստատէ դատաւորները և գործադրել այս անոնց վճիռները: Առանձնապէս հօգ պիտի տանի խաղաղ աշխատանքին զարգացման և ձարարարւեստին և հօգագործութեան կատարելագործման: Ընդհանուր կառավարիչը կարող է պաշտօնեանկ ըլլալ պետութեանց համաձայնութեամբը միայն: Իր բնակավայրը պիտի ըլլայ հայկական սահմաններու կարեսը կեղրոններէն մէկը:

Տես. — Կազմակերպական կանոնագիր Անբանանի,

* Մայիսեան յիշատակադիրը հետեւել կերպով կ'արտայալուի այս մասին: — Տրւած ըլլալով, որ բարենորոգումները պիտի գործադրեին Լրգումի, Պիթլիսի, Վանի, Մամուրէթ իւ Աղջիկ և Տիարագէթիր վեց վիլայէթներուն մէջ, պէտք է բնել այս սահմաններու թւին նւազեցման խնդիրը: Կոր բաժանում մը թոյլ տալով որոշ խնայողութիւն ձեռք բերել վարչական ընդհանուր ծախսերուն մէջ թերևս դիւրացներ վայիններու ընտրութիւնը պականցնելով անոնց թիւր և ուժեղացներ անոնց հեղինակութիւնը բարելաւելով անոնց նիւթական կացութիւնը: Այս նոր բաժանումը պէտք է կատարւի այնպիսի ձեռով մը, որ ժողովուրդները իւրաքանչիւր անհանդի վարչային զանազան միութեանց մէջ բաժանւած ըլլան ազգագրական տեսակէտով հնարաւոր եղածին շափ միատարր համախմբութերու:

ԴԱԼՆՈՒԹ. — 1885-ին առաջ 10 տարի երգումի էլայէրը կը պարունակէր Զրիտի, Դարսայ և Երգումի (այժմու վիլայէրը) շրջաներ, ինչպէս նաև Վանի իւ մէջ ունենալով ՀԱՅԵԱՐԻ, Պիրլիս և Մուզ: Այս էլայէրը յեզ բաժանեցաւ 5 վիլայէթներու: 1877-ի պատերազմէն եղը այս նորարածին Պիրլիտի մասցած մասը բաժնեցաւ 4 վիլայէթներու: — Երգում, Վան, ՀԱՅԵԱՐԻ, Մուչ: Անկից յեզ ՀԱՅԵԱՐԻ շրջան միացեցաւ Վանայ միլայէրին, իսկ Առոյ շրջանը Պիրլիտի վիլայէրին, որ նոր սեղծւեցաւ: Աւելի ետք Առաւելէր իւլ Ազիզի սահմանը, միացմանը մէկ նախի յարակից նորամասերուն, դաշձաւ վիլայէր մը, իսկ Տերումի վիլայէրը եղաւ անոր մէկ սահմանը

Կազմակերպական կանոնագիրը բումելիի, Դեղին գիրը (Հայկական գործեր) 1897 թիւ 48, 49, 51, 52, 53, 55, Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

3) Ընդհանուր կառավարիչին բով պիտի հաստատուի ընդհանուր ժողով մը, ընտրւած հետևեալ կերպով.— իւրաքանչիւր գաղա (գաւառակ) պիտի ուղարկէ մէկ խորամ մէկ քրիուունեայ երկու պատգամաւոր սանձագին (գաւառ) զլիսաւոր քաղաքը, ուր պիտի ընտրին երկու խորհրդականներ մէկը խօսմ միւսը քրիուունեայ: Ընդհանուր ժողովը պիտի գումարուի տարին անգամ մը իր գործը պիտի ըլլայ քննել հանրային օգտակարութիւն ներկայացնող աշխատանքներու վերաբերեալ խոդիները, ինչպէս հաղորդակցութեան միջցներու զարգացում, վարկային մնտուկներու կազմութիւն և այն ամենը, որ կրնայ ծառայել նպաստելու հանրային կրթութեան, հողագործութեան, վաճառականութեան և ճարտարարւութիւն: Ընդհանուր ժողովը պիտի բաժանէ նաև հարկերը և հակագչու (control) հասոյթներու և ծախսերու յանձանձումը: Իր մէջէն պիտի կազմէ մնայուն խորհուրդ մը օժանդակելու համար ընդհ. կառավարչին՝ ժողովին չգումարուած ատենները:

4) Վեց վիլայէթներու պիտմէն պիտի կազմէի հինգ առաւան ժամանակամիջոցի մը համար, հասոյթներու միջնին հիման վրայ ընդհ. ժողովին կողմէ, համաձայնութեամբ ընդհ. կառավարչին: Եկամուտները պիտի յատկացւին նախ աեղական պէտքերու գոհացման և աւելացածը պիտի զրկի կեդրոնական կառավարութեան:

Տես. — Կազմակերպական կանոնագիր Լիբանանի, կազմակերպական կանոնագիր 1868-ի Արէտէ կղզիին, կազմակերպական կանոնագիր Արէելեան բումելիի, Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

4) Վալիները, մութէսարիֆները, գայմագամները և լիրե օժանդակ պիտի ունենան վարչական խորհուրդներ, ընտրւած ժողովութեամբ:

Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

5) Եւրոպական մեայուն յանձնաժողով մը պիտի հիմնի պետութեանց կողմէ բարենորոգութեան հաստատելու և անոնց գործադրութեանն հսկելու համար Այս յանձնաժողովը գեսպաններուն միջցաւ պիտի ծառայէ իրեւ միջնորդ մէկ կողմէն ժողովուրդին ու տեղական վարչութեան, միւս կողմէ այս վերջինին և կայսերական կտոռավարութեան միջև:

Տես. — Դեռապանաժողովներ Պոլսոյ և Ֆիլիպէի, Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

6) Ա. Ա. Սուլթանը ընդհանուր ամբողջական ներում պիտի շնորհէ քաղաքական գործերու համար դատապարտած կամ ամբաստանւած հայերուն:

7) Քոլոր հայերը ինչ կրօնի ալ որ պատկանին, որ առանց դատավարութեան աբորւած էին, ըլլայ օսմանեան կայսրութեան հողերէն դուրս, ըլլայ իրենց բնակած նահանգներէն դուրս և կամ որ դէպքերու երկիրէն կամ թշւառութենէ մղւած պարտաւուած էին

արտասահման գաղթել, պիտի կրնան ազատօրէն վերադառնալ Թիւրքիա կամ այն նահանգները, ուսկից եքած էին, առանց անհանգութիւններու ենթարկւելու տեղական իշխանութեանց կողմէ և վերստին պիտի տիրանուն մեկնելէ տուաջիրենց ունեցած ստացւածքներուն: Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

8) Ա. Ա. Հայերը, որոնք վաստած են ըլլայ իրենց անձի, ըլլայ ստացւածքի տեսակէտով, պիտի ստանան պատշաճ հատուցում և բաւականութիւն:

Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

9) Քոլոր յեանեալ տուրքերը պիտի ջնջին: 10 տարի տուրքերը պիտի յատկացւին միայն տեղական պէտքերու:

Տես. — Կարգագրութիւն Զէյթունի գործին, Դեղին գիրը, թիւ 94:

10) Բ. Դուռը պիտի հսկէ, օրպէս զի կրօնափոխութիւնները առարկայ ըլլան 1856-ի Խատարը Հիւմայունով (յօդ. 10, 11, 12) հաստատած սկզբունքներէ բղասղ երաշխաւորութեանց, որոնք գործնականին մէջ յաճախ անտես են առնեած: Կրօնափոխ ըլլալ ցանկացող անձնաւորութիւնները պէտք է ըլլան չափահան և իրենց կրօնի փոփախութեան յայտարարութիւնը ընելու պիտի արտօնւին շաբաթւան մը պայմանաժամէ յետոյ, որու միջոցնին պիտի ենթարկւին իրենց կրօնական պետին հսկողութեան:

Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

11) Բ. Դուռը յատուկ հրահանգները պիտի տայ իշխանութեանց, օրպէս զի չկրկնւին ոտնձգութիւններ հայ կղերին և հասարակութեան այն իրաւունքներուն ու առանձնաշնորհումներուն գէմ, որոնք կը բղին 1863-ի սահմանադրութենէն (կազմակերպական օրէնք հայոց) և սուլթաններէն պարգևեած պէրաթններով:

Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

12) Ասիական թիւրքիոյ միւս այն վիլայէթներուն մէջ, ուր որոշ սանջակներու հայ ժողովուրդը ընդհանուր ընակչութեան կարևոր մէկ մասը կը կազմէ, վայի կողքին պիտի նշանակուի մասնաւոր քրիստոնեայ պաշտօնեայ մը հայոց շահերով զբաղւելու համար Այս պաշտօնեան պիտի ընդունին հայ ժողովուրդին աղերսները և զանոնը պիտի հաղորդէ վալիին, որ համաձայնութեամբ նոյն պաշտօնեային պիտի տայ այդ աղերսներուն պէտք եղած հետևանքը:

Բացի այդ՝ այս պաշտօնեան կանոնաւորաբար տեղեկագրեր պիտի ուղղէ Պոլսոյ հակակշուղ մեայուն յանձնաժողովին: Այս վիլայէթներուն մէջ, ուր որոշ տեղեկագրեր ընակչութեան մեծամասնութիւնը կը կազմեն, վարչական արդի բաժանումը պիտի փոփոխուի և նահանգներու (գիւղախումբ) կազմութեան վերաբերեալ բարենորոգութեանց ծրագրին տրամադրութիւնները պիտի գործադրուին այդպիսով իրեւ առանձին վարչական միութիւններ ընդունւած տեղերուն մէջ:

Տես. — Յիշտատակագիր 11 մայիս 1895-ի:

— 13) Կորպին կորդը պիտի պահպանեն ուստիկանութիւնը ոստիկանութիւնը զինորութիւնը (*gendarmerie*) և տեղական բազմապահի զինորութիւնը (*police*), առանց ցեղի ու կրօնի խարութեան, կազմակերպւած եւրազպացի սպաներէ և անոնց հրամանատարութեան տակ:

Տես. — Կազմակերպական կանոնագիր Լիբանանի, Կազմակերպական կանոնագիր Արևելեան բումբի, Պերլինի դաշնագիր յօդ. 15:

14) Զենք կրելու մասին խստօրէն միակերպ կանոնագիր մը ի գործ պիտի դրւի ամրոջ ժաղովորդին համար, առանց ցեղի և կրօնի խարութեան:

Զինորական տուրքը (*պէտէլը ասկէրի*) պիտի ջնջւի ոչ-իսլամներուն համար. բազմապահի զինորութեան մէջ ծառայութիւնը պարտաւորիչ պիտի ըլլայ բոլոր աղջացներուն համար:

15) Համիդիէ զօրքը պիտի արձակւի և քիւրդերը միւս օսմանեան հապատակներուն պէս պարտաւոր պիտի ըլլայ կատարելու կանոնաւոր զինորական ծառայութիւն:

Տես. — Յիշատակագիր 11 մայիս 1895-ի:

16) Դատական բարենորոգութեանը 11 մայիսի բարենորոգութեանց ծրագրին մէջ ցոյց տրւած սկզբունքներուն համեմատ *):

17) Ազատութիւն հաւաքումներու, հանրային կըրթութեան և մամլուլի:

*) 11 մայիսի բարենորոգմանց ծրագրին արդարութեան վերաբերեալ մասը, որ կը կազմէ նոյն ձրագրին 87-րդ դրույթը, կը բազիկանայ հետեւեալ յօդւածներէն:

Յօդւած 29. — Նահիէլի (*գիւղախումը*) իւրաքանչիւր անդուրին մէջ գոյութիւն պիտի ունենայ ծերերու խորհուրդ մը մախուարին նախագահութեան տակ, որուն պաշտանը պիտի ըլլայ նոյն տեղույթ ընտելիչներուն միջն ծագուծ վէճերը կարգադրել բարեկամօրէն:

Յօդ. 30. — Իւրաքանչիւր գազայի (*գաւառակի*) մէջ գոյութիւն պիտի ունենայ համեմատորէն նահիէլներու թւին բաւկանաչափ թւով հաշտարար դատաւորները (*Juges de paix*), նշանակւած դատական նախարարին կոզմէ, համաձայն քալիին ցուցմանքին: Այդ հաշտարար դատաւորներէն մէկը անզատմառ պիտի ընակի գազային գլխաւոր բաղաքին մէջ Գազայի մը հաշտարար դատաւորներու մէկ երրորդը քրիստոնեայ պիտի ըլլայ: Քրիստոնեայ հաշտարար դատաւորները պիտի հաստատւին այն կեղուններուն մէջ, ուր քրիստոնեայ ազգաբնակութիւնը մեծագոյն թիւը կը կազմէ:

Յօդ. 31. — Հաշտարար դատաւորը պիտի զբաղի ա) Պատժական խնդիրներու մէջ առանց վերաքննութեան այն օրինազանցութիւններով (*contravention*), որոնք ենթակայ են հասարակ օստիկանական պատիժներու և վերաբնութեան պարագային այն յանցանքներով (*délit*), որոնք ենթակայ են ամենաշատը 500 զրուց տուգանքի և 3 ամսւայ բանտարկութեան, բ) Քաղաքային խնդիրներու մէջ առանց վերաքննութեան մինչեւ 1000 զրուցոց անհատական, բաղաքային և առեւտրական դատերով, իսկ վերաքննութեան պարագային մինչեւ 5000 զրուցոց նոյնօրինակ դատերով:

Յօդ. 32. — Հաշտարար դատաւորը պիտի կայացնէ նաև

հաշտութեան դատարան: Պիտի կրնայ, վիճող կողմերու խնդրանքին վրայ իրաւաբարներ (*arbitrage*) նշանակել կարգադրելու համար այնպիսի վէճերը, որոնց առարկան 5000 զրուցէն աւելի է: Իրաւաբարական վճիռի մը արձակւելու պարագային, վիճող կողմերը պիտի հրաժարին վերաբնութեանէ:

Յօդ. 33. — Տրւած ըլլալով, որ հաշտարար դատաւորները գազաներուն մէջ դատարանի տեղ կը բռնեն իրենց սրուշում ներու վերաբննութիւնը, բաղաքային խնդիրներու մէջ տեղի պիտի ունենայ սանձագին դատարանին տաղեւ:

Յօդ. 34. — Հաշտարար դատաւորներուն կողմէ ըստ իրենց իրաւառութեան արաւառունական բանտարկութեան դատապարտութիւնները պիտի գործադրուին գազային բանտին մէջ մէջ տեղի առաջին առաջարարին հաշտարար դատաւորներուն պիտի օժանդակին ժեկ բաղաքային ժեկ պատժական վճիռներու գործադրութեան մէջ:

Յօդ. 35. — Գազայի դատարանները ջնջւած ըլլալով, սանձագին դատարանները պիտի զբաղին 5000 զրուցէ աւելի դումարներու վերաբերող բաղաքային գործադրով և բաղաքային խնդիրներու մասին հաշտարար դատաւորներու որոշումներու վերաբննութեամբը: Սանձագին դատարանները պիտի ունենան միմիարն բաղաքային ատեան (chambre civile), իսկ պատժական ատեանին տեղ զոյութիւն պիտի ունենան ըրջուն ոճրադատ ատեանները (cour d'assises): Սանձագի դատարանները պիտի կազմւին նախագահէ մը, որ պիտի ըլլայ վկանակ դատաւորները պիտի կազմւին նախագահէ մը, որոնք պիտի ընտրուին վաղինին կողմէ սանձագներու խորհուրդներուն պատրաստած ցանկին վրայէն:

Յօդ. 36. — Այսպէս սանձագներու դատարաններուն պատժական ճիշգերուն տեղ պիտի հաստատւին ըրջուն ոճրադատ ատեանները: Ասոնք պիտի ունենան նախագահէ դատաւոր մը վիլայէթին բարձրագոյն ատեանին անդամներէն առնեած և անոր պիտի միացւին երկու անդամները, մէկը իսլամ մէկը բրիտանոնեայ, նշանակւած վերաբննիչ ատեանին կողմէ սանձագին հաշտարար դատաւորներուն մէջէն Այս հաշտարար դատաւորները մասնաւոր հատուցամ մը պիտի ստանան ոճրադատ ատեանի ըրջանի միջոցին:

Յօդ. 37. — Ոճրադատ ատեանը նիստ պիտի գումարէ կարգաւ այն բոլոր գազաներու մէջ ընդ որու և վիլայէթին դիմուոր բաղաքը և սանձագներու զիմուոր բաղաքները, ուր իր ներկայութիւնը անհյանեցան կը նկատի: Այս ատեանը պիտի վրայի վերաբններով հաշտարար դատաւորներու որոշումները յանցանըներու մասին, իսկ առանց վերաբննութեան այն սճիրներով ու յանցանքներով, որոնք ենթակայ են 5000 զրուցէ աւելի տուգանքի և 8 ամսէ աւելի բանտարկութեան:

Ոճրական խնդիրներու մէջ ոճրադատ ատեանի կողմէ առանց վճիռները կրնան ենթարկելի միայն վճռադրենի ատեաններին:

Յօդ. 38. — Ոճրադատ ատեանի նախագահը գաղան հասնելով, պիտի պահանջէ հարցաքննիչ դատաւորնեն մէկ ցանկի տեսնեած այն դատերուն, որոնք կրնան անմիջապէս ներկայացնելու իրեն և ցանկ մըն ալ այն դատերուն, որոնք տեսնելու վրայ են: Եթէ այս վերաբններու մասին հաստատէ որին անկանութիւն կամ անարդարանալի ուշացումները, անմիջապէս տեղեկացներէ մը պիտի ուղղէ դատական նախարարութեան:

Ամբողջաւանի անդամենքը գաղան եկած և անկից մեխանած ժամանակի, պիտի այցելեն բանտերը, պիտի տեղեւ հանան բանտարկեալներու կացութեան և արձանազրութեան տեսքերը պիտի սռուգեն:

Յօդ. 39.—Անիլայէթի բարձրագոյն ատեանը պիտի բաղկանայ նախագահէ մը և բաւականաչափ թւով ատեաներէ, զբաղելու համար ներկայացած բաղաբային դործերով և հայթայիթ ելու համար նախագահներ շրջուն ոճադատ ատեանեներուն Այս բարձրագոյն ատեանը պիտի պաշանավարէ բաղաբային խնդիրներու մէջ իրեւ վերաբննիշ ատեան, իսկ պատժական խնդիրներու մէջ, իրեւ ոճադատ ատեան: Եթ կազմութիւնը օրինաւոր է, երբ ներկայ են նախագահը և երկու անդամներ: Բացի այդ, այս ատեանը կը պարունակէ նաև ընդհանուր դատախազ մը և բաւականաչափ թւով փոխանորդներ:

Յօդ. 40.—Հաշտարար դատաւորներու որոշումները, ինչպէս նաև ամեն կարգի դատարաններու վճիռները պիտի դրւին թիւրքերէն լեզուվի թիւրքերէն ընազրին, բատ տեղուցին և զատի մէջ եզրո կողմերուն, պիտի կցւի անոր հայերէն լեզուվ մէկ թարգմանութիւն:

Ա Յ Ա Խ Ա Յ Ա Փ Յ Լ Ա Յ

Բաւական ժամանակից ի վեր՝ ամենօրեայ միմեանց յաջորդող գեպբերը, կարելի է ասել, մի առանձին նորութիւն չեին մերում, — նրանք գրեթէ նորմալ կերպով շարայարուղ մի շղթայի օղակներն են:

Պարլամենտի ցրումից ու ընտրութիւններից յետոյ իթթիհատի մենատիրութենէն և այդ մենատիրութիւնը ապահովելու համար միջոցների մէջ խորութիւն չդնող մտայնութիւնն ուրիշ բան չեր սպասւէր: Ուստի և այդ շղթայի ամեն մի օղակով առանձնապէս զբաղւելով, մի նոր միտք արտայայտած չպիտի լինէինք:

Ընտրութիւններից շատ առաջ, Դաշնակցութեան իթթիհատին մօտ բարեկամ համարւած ժամանակներում էլ, իմ հրապարակ դրած և միշտ տրամարանօրէն անխախտ պահած կործիքը այս էր.

Հաստատելով և ուժգնորեն բննադատելով հանդերձ իթթիհատի ձախող քաղաքականութիւնը կամ աշխարհակարումը, առիշոյէ կազմակերպւած լաւագոյն տարրի, նրա հետեմօնին ընդունել եմ միշտ, իրեւ անխուսափելի, գերադասելի ու տանելի շարիք, գէթ իրաց գրութիւնը պահելու, աւելի աղէտաբեր ու աբախոնի տեղի չտալու համար, մինչև որ լաւագոյն տարրերը կազմակերպւին և հակադիր կամ փոխարինող ուժ կազմեն:

Ես չափազանց սկեպտիկ եմ եղել երկրի ճակատագիրը կարենալ վարելու, փրկելու բաղաբական-ընկերային կազմակերպւած ուժ հրապարակ գալու վերաբերման:

Թիւրքիոյ մէջ ամենից շատ են զբաղւում նոյնիսկ

մասսաները բաղաբականութիւնով, բայց հիմնական համազաւմ, համոզմունքի պաշտպանութեան չի բաղաբացիական արիութիւն և զոհաբերութիւն բացակայում է:

Տիրող տարրերի մէջ ո՞չ մի կուսակցութիւն ուժ և հիմնակութիւն չի ներկայացնի: եթե բանակը յենարան չունի, որովհետեւ քիչ ու շատ քաղաքացիական չիղն ու առաքինութիւնը, յեղափոխական իսկական բայց չզարգացած ոգին զինուորական տարրի մէջ է ենթադրում:

Իսկ մինչև որ այդ ոգին, այդ վիզը, ուժը կամ հիմնակութիւնը բանակից տիրող տարրերի ոչ-զինուորական խաւերում չտարածելի, իրական բարեշրջումի կամ յեղացրջումի հաւատքը ընծայել անբնական է:

Ասել որ կը կնել եմ, որ 1908 յուլիսի 10-ը Յեղափոխութեան հետեանք չեր՝ այլ Բանակի մի մասի սպառնալիքին, պի ե ա կ ա ն հ ա ր ւ ա ծ ծ ի ն:

Մարտի 31-ից յետոյ Համիդի անկումն էլ Ազատարար Բանակի գործը եղաւ և ո՞չ բաղաբացիների: Յեղափոխական Կազմակերպութիւնների:

Իթթիհատը խելքի բերողն էլ Բանակը պիտի լինէր և ո՞չ ընդդիմութիր տարրերը—խօսքը տիրապետողների համար է:

Բայց իթթիհատը և հետեաբար նրա նեցուկ Բանակի մասը իշխանութեան գլուխ լինելով, երևութեները չեին յուսագրի, որ այդ նեցուկը հեշտութեամբ հրաժարուի իր վայելած առաւելութիւններից և լքի իր պաշտպանելը:

Գեպբերը հակառակն ապացուցին:

Առաջ եր եկել ո՞ջինուրական Ազատարար Լիգը:

Թէ ի՞նչ ուժ ու համեմատութիւն էր ներկայացնում այդ Լիգը, զինուորականութեան ո՞ր խաւերում էր տարածւած, այդ մեջ մեջ է խորհրդաւոր, բայց թւում էր, որ գէթ իր մեծամասնութեամբը իթթիհատեան չնորհներից շատ չվայելող, դժգոհներիցն է:

Անկասկած որ գրանց շարքումը մաս և ողգեցութիւն ունեին Ալբանական արիւնն ու ազգային ոգին:

Բայց հենց որ Բանակի մէջ այդ շարժումը ուշադրութիւն գրաւելու, աղղելու աստիճանին հասու, իթթիհատը միամստութիւն ունեցաւ Բանակը բաղաբականութիւնից հեռու պահելու ստիպող օրէնսդրական զարդ միջոցին դիմելու՝ թէ միենոյն ժամանակ խարուսիկ զիջումներ էլ գործ դնելով, ինչպէս Մահմուդ Շէքը կամ փաշարի հոսանքումը:

Իթթիհատի անսկզբունք տակտիկան է՝ ինք իր մէջ ամեն կօմպրօմիս ընդունել՝ միայն թէ իր մենատիրութիւնը չխանգարուի, ինչպէս այդ արեց Սատըգ բէգեան հերձւածի, անցեալ տարւայ Սալօնիկեան Կոնգրէի ժամանակ:

Բանակը բաղաբականութիւնից հեռու պահելու օրէնքը ուրիշ բան չեր նշանակի՝ բայց եթե ասել որ Բանակը

Իթթիհատին չպիտի բննոգատի, կառավարութեան բայլերին չպիտի հետևի:

Միթէ իթթիհատը ա'յնքան միամիտ էր, որ չըմբըռնէր և չընդունէր՝ թէ բանակին իթթիհատական մենատիրութեան սեցուկ լինելը ինքն ըստ ինքետն բանակին բաղաբականութեամբ զբաղւելն է:

Եւ բանակը անկեղծօրէն բաղաբականութիւնից հեռացնելը կը նշանակի ջնջել մենատիրութեան յենաբանը, որ սակայն իթթիհատը չէր կարող կամենալ:

Նշանակալից էին այդ տեսակէտից Ծէվքէթ փաշայի Ծերակոյտի առաջ արտասանած խօսքերը, երբ գնացել էր Խորհրդարանից շուտափոյթ բւէարկւած օրէնքը Ծերակոյտի առաջ էլ պաշտպանելու և բւէարկել տալու համար ու մօտաւորապէս այսպէս էր ասել — "Այս օրէնքը բաւական չէ, կուսակցութիւններն ել պէտք է ձեռք բաշեն բանակը բաղաբականութեամբ զբաղեցնելուց":

Եւ պատերազմական նախորդ նախարարը յաջորդ օրը հրաժարւեց: Մի պարագայ՝ որ բնականաբար խորհըրդաւորութեան մէջ կը թողուր, թէ նախարարը զոհւեց իթթիհատական մի կօմպրօմիտի համար, թէ ստիպւացաւ ինք տեղի տալ Ծերակոյտի առաջ իր յայտարարութեան արամադրութիւններով:

Թիւրիմացութիւն էր պաշտպանել Բանակի բաղաբականութիւնից հեռի մնալու գաղափարը:

Թիւրիմացութիւն էր պաշտպանել՝ թէ բանակը շարժելու և միմիայն Սահմանադրութեան դէմ հարւած արւելու պարագայում:

Սահմանադրութեան դէմ հարւած արւելու, սահմանադրական ուժիմը տապալելու բազմաթիւ ձեւեր ու աստիճաններ կան: Լու միթէ չէր կարելի ունենալ այն տեսակէտը, որ յանուն սահմանադրականութեան, յանուն կարգի պահանջանութեան իթթիհատեան օրէնսդրական փոփոխութիւններն ու առժամանակեայ օրէնսդրութիւնները Սահմանադրութեան դէմ հարւածներ չէին, դի կատարութեան չէին:

Եւ աւելին: Խնչ աւելի մեծ վասնգ, բան հայրենիքի գոյութեան դէմ սպառնացող վտանգը Եւ միթէ ամեն կողմից չէր լսում, թէ ակրող բաղաբականութիւնն ու ներքին և արտաքին բարդութիւնները հայրենիքի գոյութեան վտանգը են սպառնում:

Բանակը ջղից ու արիւնից զուրկ պիտի լինէր այս ընդհանուր դրութեան դէմ անաբբեր հանդիսաւես լինելու համար:

Օրէնքները մեռած տառ են՝ եթէ կենքից չեն բզիսում:

Կասկած չի կարող լինել, որ կօնտրօլը միայն բանակին կամ նրա մի մասին վիճակւած լինելը՝ չի երաշխաւորի լաւ ելք, փրկութիւն:

Ծարժումը գոյութիւն ունէր: Ա'չ մի դատապարառւթիւն նրան չէր կարող կասեցնել:

Ծէվքէթ փաշայից յետոյ, իթթիհատեան նախարարութեան մէջ պատերազմական նախարարութիւնը ստանձնելու համաձայնող չգտնելը, ելևմտական նախարարութիւնը երկար ժամանակ բաց թողնելու ստիպիլը, վերջապէս հարկադիր Ասյիտ փաշայի դահլիճի հրաժարակութիւնը սատրազամերի նախարարութեան կազմելու սրանը բոլորն էլ հետեւնք էին այդ շարժումին և շարժումին ծնունդ եղողները իրաւունք չունին իրենց ծնունդին դատապարտել:

Իթթիհատը զիջումներով, տեղատութիւններով կարծեց ժամանակաւորապէս կասեցնել կամ սահմանափակել այդ շարժումը, բայց պարզաբնտական իր մեծամասնութեան դէմ ուղղող պահանջները նրան զջայնացնում էին և ինքն էլ կազմակերպում էր հակադիր շարժում դարձեալ բանակից: Ունակօխում էր իր օրէնքը իր իսկ ձեռքով:

Ո՞ւ պիտի յանգէին այս հակադիր շարժումները: Դժւար էր պատասխանել:

Միայն մխիթարական յոյսը նրանում էր, որ արտաքին թշնամիի դէմ կը միանան: Բայց գժւար չէր գուշակել հաւանականութիւնը ներքին բաղաբական կուրի, որի ակտիվ բաժինը գարձեալ բանակին էր վերապահւած երեւում:

Աը տարածւէ՞ր շարժման ակտիվ մասնակցութիւնը և բանակից գուրս, և ե՞րբ:

Հաւանական պատասխանը տալու հիմքերը պահանում էին:

Բայց այն օրը, որ Բանակով սահմանափակւած չէր լինի իրական շարժումը, այն օրը միայն պիտի սկսէր այս երկրում իրական յեղափօխութիւնը:

Ո՞ր կողմը պիտի յաղթէր տեղի ունենալիք բաղաբական ներքին կուրի մէջ Պիտի կատարւէ՞ր արդեօք փրկարար յեղաշրջումը, զպիտի՞ օգտւեր արդեօք ու աքաբսիօնը և կամ թշնամիները ժամանակ պիտի տայի՞ն, որ ներքին կուրները վերջանան առանց վտանգի — անգերջ ու մտատանջ հարցումներ էին՝ որոնց պատասխանը անհնար էր:

Անհնար էր մանաւանդ, որ այս բազմացեղ երկրի մէջ ընդհանուր գործակցութիւն չէայ, ու տիրապետողներից և ալբանական զէն ի ձեռին կուրողներից գուրս՝ չէր երևում հաւանականութիւնը, որ Ազգային-Քաղաքական Կուսակցութիւններն էլ իրենց վճռող խօսքը ունենան, իրենց կշռող գերը ունենան:

Առանց դրան՝ մութ ու անյուսագիր էր պարագան: Դէպքերը եկան այս յոյն տեսակութեան աւելին իսկ հաստատեցին:

Պատմական դարաշրջաններում և վերջին ժամանակներում մինիստրութեան ու գերիշխանութեան համար

միմեանց յօշոտող բարկանեան ու լոգէական ծովի քաղաքական փոքրիկ ջանգաւածներն ու Ազգերը առաջին անգամը լինելով զլուխ բերեցին քաղաքակրթական անհրաժեշտութիւնը. — փոքրիկ ու եռութեանց կամ բարկանեան Դաշնակցութիւնը:

Այդ Դաշնակցութիւնը զենքի սպառնալիքով դրեց իր պահանջը Եւրոպական Թիւրքիոյ ապակենարօնացեալ ինքնավարութեան պահանջը:

Թիւրքիան մերժեց 1880-ի բարենորոգմանց ծրագրի խաղերով:

Թիւրքիան մերժեց Փոքրիկ ներին արհամարչելով, իր Մեծութեան յաւակնութիւններով, և հաւատականաբար Սատրազամներին նախարարութեան անդամակցող և իրականապէս նախարարապետը և Անգլիոյ մարդը եղան Քերոմիլ փաշարի Անգլիայից գանելիք օժանդակութեան յոյսերով:

Մինչ մի կողմից Սատրազամների նախարարութիւնը կերպարանափոխում և նոր ասրբերով աւելի ռեացիօններական գոյն եր ստանում, Համբիդեան Ամարիլլան ընդհանուր ներումով Մայրաքաղաք եր վերադառնում, աւատականութիւնը ներքին ու արտաքին դրդութերով քաղալերած, ոչ-ընդհանուր՝ բայց խմբական սպանութիւնների, ալան-թալանների շարքն եր սկսում Հայատանում, միւս կողմից Բալկանեան պատերազմն եր յայտաբարութեւ:

Աւ ի՞նչ պատրանք, ի՞նչ մերկութիւն:

Տասնեւհինգ օրւայ մէջ ահաելի արտգութեամբ փուլ եկան թիւրքի վաղեմի ռազմիկի համբաւն ու վերջի չորս տարինների մէջ վերակազմւած բանակի կարսդութեան ենթադրութիւնները, նրա վրայ դրաւծ յոյսերը:

Ինչպէս նոր Թիւրքիան վերջին քառամեակում ապացուցել էր, որ հնի ու նորի մէջ տարբերութիւնը միայն արտաքին շպարն է, որ կառավարելու, քաղաքական, քաղաքակրթական, պատմական անհրաժեշտութիւնների ըմբռնութենքի մէջ՝ երկուսն էլ էապէս միենողնն են ու ընդունակ են միմիայն պատկտելու, քայլայելու և սպանդանոցներ ստեղծելու՝ այդպէս և պացուցին, որ զին և որ ականութեան մէջ ևս, ոչ միայն մի բայլ առաջ չեն գնացել, այլ մանաւանդ աւելի յետ:

Լազարալութենմ՝ իր բոլո՞ր ճիւղերի մէջ...

Փախչում է թշնամու առջեկից քաղցած, անվարժ, հայրենիքի պաշտամունքից զուրկ, պետութեան վրայ հաւատքը կորցրած զինորը. փախչում է փափկասուն, անփոք ու այլասեռած սպան:

Բացառութիւնները անզօր են՝ ոտնահարւած պատիւը վերականգնելու:

Բական հետեանք փուախ ու ի:

Աւ Եւրոպան գտան փորձերից խրատած, յուսահատ, նոր՝ Դաշնակցութեան՝ Յօթներրորդ Մեծ Պետութեան

յաջողութիւններից շշմւած, այլ ևս չունի Թիւրքիան փրկելու, առ նւազն Եւրոպայում նրա գոյութիւնը անհրաժեշտ համարելու իր վաղեմի նշանաբանը:

Թշնամին մայրաքաղաքի գրան մօտն է և գուցէ դեռ առաջ սլանայ, բայց չկայ այլ ևս Մեծ Ալբիոնի սպառնալիքը յաղթական բանակը կանգնեցնելու:

Աւստրո-սերբ կնճիռը, այդ կնճոի յետեւում դառող ու սեփական հաշիւների յարդարութիւններու, պատրաստող Թրունսա, Անգլիա, Գերմանիա, Իտալիա—երկու գլխաւոր համախմբութիւններ — եթէ միմեանց հետ քաղաքին իսկ, այդ ոչ թէ Թիւրքիոյ գոյութիւնը պահպաննելու, այլ ժառանգութիւնը բաժանելու, մանաւանդ անդլոյ գերման մրցակցութեան մղութերի, կանխամածածւծ ծրագիրների համար են:

Աւ վաղը պիտի կանգնի ինքնօրէն, անկախ Ալբանիան և ազատագրւած Մակեդոնիան՝ ում հետ ել կապւի, պիտի մտնի ծաղկումի, ուռնացումի ըրջանը:

Խսկ Հայաստանը...

Եւրոպայից վտարւածները պիտի արշաւեն Փոքր Ասիա՝ աւելի ստարացնելու համար կեղեցիների ու տպրուկների արդէն իսկ ստար բանակը...

Մենք ենք, ու մեր խօսքը չունինք, մեր աեղքը չունինք...

Ա. Պօլիս

Վ. Ա. Դ. Ա. Կ

Կ Ե Ն Ս Ա Գ Պ Ր Ա Կ Ա Ր Ա Ն

Հ Ա Ա Մ Ե Ա Կ Զ Ա Ն Փ Ո Ւ Ա Գ Ե Ա Ա Ն

(Հ Ա Ա Մ Օ Յ)

1904 թւականի սկզբներում մի օր Ալեքսանդրօպոլի կենտրոնական կօմիտէի առաջ երեւում է դպրոցական նստարանը նոր թողած մի թուիս պատանի, ուս եկել եմ ծառայելու Հ Յ Դաշնակցութեանը, վատահ շեշտով յայտնում է նա, ես խնդրում եմ ձեզ, որ գործ տաք ինձ, տերրօր կամ Հայաստան գնալ. ես ուզում եմ մեռնել Հայրենիքի համար:

Այդ պատանին՝ Հայեակ Ջանփոլադեանն էր, „Համան“, բնիկ Այսոց Չորցի, Կամփառում բաւական յայտնի մի ընտանիքի զաւակի: Հայնամիկունք, աշխորժ, կրակոտ շարժուձեւերով մանկութիւնից ձիու վրայ և հրացանը ձեռքին մեծացած: Իր ըմբռու բնաւորութեան պատճառով կիսատ թողնելով գպրոցի դասընթացը, գժաւելով հօր հետ—իրեն ամբողջ հոգով ու մարմնով նւիրաբերում է յեղափոխական շարժմանը՝ այնտեղ գտնելով իր ուժերի և զգացմունքների համապատասխան միջավայր:

Սակայն Ալեքսանդրօպոլի կօմիտէն նկատի առնելով նրա տարիբը, յեղափոխական ասպարեզում անփորձ լինելը, մերժում է նրան յանձնել մարտական գործեր, այլ որպէս շրջիկ-քարոզիչ՝ փորձւած շրջիկների ձեռքի

տակ, ուղարկում է Շիրակի գիւղերը՝ նա չըջում է գիւղերը, խօսում՝ քարոզում, գիւղական ենթակօմիտէների հաշիւները բննում, զենքի տեղափոխութեան մասնակցում, բայց այս ամենը նրա սրտով չէ. նրա անզուսպ հոգին կռիւ, հերոսական գործեր է տենչում:

Այդ օրերում Ալեքսանդրովովը և Կարսը Տաճկա-Հայաստան ֆեդայական խմբեր ուղարկելու համար պատրաստութիւններ էին տեսնում. անցնում էր Կայծակ Վաղարշակի խումբը, և մի թիչ յետոյ անցնելու էր Թումանի խումբը: Համօն խնդրում է կօմիտէին, որ

իրեն էլ վերցնեն խմբերից մէկի մէջ. սակայն նորից նոյն առարկութիւններով մերժուում է:

Յայտնի է Թումանի խմբի ողբերգական վախճանը: Դուցէ ո՞չ մի անգամ ուսւական պաշանելութիւնը այնպէս ուսաց տակ չէր տւել մարդկաւին խիզճն ու պատիւը, բան այս դեպքում, երբ մի բուռն, սրբազն ոգեսրութեամբ վառւած հայ երիտասարդներ գնում էին թիւրք զօրքի սւիների վրայով իրենց դարերով տառապած եղբայրներին օգնութեան ուսւ իշխանութիւնը լոյս-ցերեկով Օլթի սահմանագծի վրայ, միացած թիւրք



Հ Ա Մ Յ Ե Ա Մ Ւ Ք Ա Մ Ե Գ Ո Լ Ա Պ Ե Կ Ա Մ Ա Բ Ա Ր Ա Ծ Ա Ր Ա Ծ

զինուրների հետ, հրացանազարկ արեց հայութեան ամենաընտիր զաւակներին: Ազգերի ողատագրութեան պատմութիւնների մէջ այս եղակի տմարդ, յաւետ անմոռանալի եղեռնին,—ուր երկու արիւնոտ բռնակալութիւններ իրար ձեռք են տալիս մի մարտիրոսւող ժողովը դիմ—զոհ գնացին Նւիրակոն թումանը, Շիրակեցի Տերտէրը, Ալեքսանդրովովը սբանչելի Վաղոն ու Մարտին Ստեփանեանը, հաչակաւոր Որսորդ-Գէորգը և միւս լուսահոգի Նահատակները: Ամբողջ հայութեան վրայ սուգ ու սարսափ տարածւեց, և միւնոյն ժամանակ վրէժի և ցաման հումքներ ձայներ յեղափոխական հայնածաւալ իրաւում... Ըստերը բուռն փափագ յայտ-

նեցին վրէժինդիր լինելու այդ եղեռնը կատարող բ. ը կ ո վ կոչւած բորենուց, որ Օլթի կազակների վաշտի պետն էր. սակայն այդ պատիւը վիճակւեց պատանի Համօին:

Համօն խնդրում-պահանջում է Ալեքսանդրովովի կօմիտէից, որ իրեն յանձնուի այդ տերրորը, համոզելով, որ ինքը յաջող կը կատարէ, բանի որ լաւ ծանօթ է Օլթին, իրենք այնտեղ ազի հանքեր ունին, Բըկովի հետ անձամբ ծանօթ է, նա կարող է այդ գաղանին հենց իր բնակարանում սպանել մերժման դէպքում ինքը իր սեփական նախաձեռնութեամբ, ինքնագլուխ կը դնայ և կը կատարէ: Կօմիտէի ընկերներից մի քանիսը դիաել և

ուսումնասիրել եին Համօի ուժեղ բնաւորութիւնը, համոզունք էին գոյացրել նրա անյօդողդ կամքի և յանդգնութեան վերաբերմամբ վերջապէս որոշում է և նա գնում է Օլթի Մի քանի օրից յետոյ վերադառնում է նա, գործը յաջող կատարած. ԲԸՀԿՎԸ Համօի վրիժառու ձեռքբց դնդակահար ընկնում է հենց իր թիկնապահ կազակի աչքերի առաջ Այդ կատարում է 1904 թւին օգոստոսի առաջին օրերին:

Համօն տեղափոխուում է Թիֆլիս ։ Նոյնպիսի յաջողութեամբ նա գլուխ է բերում մի պրիստաւի տերրօրը թիֆլիսի ամենաբանուկ փողոցներից մէկի վրայ. Այդ պրիստաւը մեծ եռանդ էր ցոյց տալիս դաշնակցականներին հետևելու, խուզարկելու, զենքեր գրաւելու մէջ:

1905 թւի փետրարին, Բագւում բռնկում է նոյն ռուսական պաշտօնէութեան ստդրած այն մեծ արիւնութագը; որ յայտնի է „Հայ-թաթարական ընդհարում” անունով: Թաթարական խուժանը յարձակւում է հայերի վրայ. յանկարծակիի եկած հայերի մէջ հանդէս են դալիս միայն մի քանի տասնեակ դաշնակցական զինւածերիտասարդներ, որոնց քաջագործութիւնների մասին շատ է գրւած իր ժամանակին: Համօն այդ անձնւէր քաջերից մէկն է լինում, որ ականատեսների վկայութեամբ ամենայն անվեհերութեամբ կուսում է, փողոցից փողոց անցնելով և մաքրելով հայ թաղերը դաշնացած թաթար խուժանից:

Երբ ապացուցում է, որ Բագւի թաթարական յարձակումը ներշնչւած և կազմակերպւած է եղել նահանգապետ Նակաշճէի ձեռքով, որ յայտնի էր իր հայատեցութեամբ, առաջ ել իրը և երեանի նահանգապետ (Փակագնի մէջ ասենք՝ նա էր, որ գրոհ տւեց էջմիածնի հինաւուրց սրբավայրը և ծերունազարդ հայրապետի աչքերի առջև կազակներով խորտակեց մայր ամռոի գանձարանի դռները՝ կողոպտելու համար վակը երեակայեալ հարստութիւնները):

Հ. Յ. Դաշնակցութիւնը չյապաղեց իր մահավճիռը այդ դաւադիր բիւրօկրատի նկատմամբ, և գործը յանձնեց Համօին և նրա նման անձնուրաց հերոսներին. սակայն, այս անգամ բախտը դաւաճնեց անվեհեր Համօին:

Երբ նրանք ընկերներով Բագւի բաղաբեյին պարտիզում սպասում եին Նակաշճէի գուրս գալուն, յանհարծ շրջապատում են լրտեսներով ու ոստիկաններով և դեպի ոստիկանատուն տարւում Համօն փախչում է ոստիկանատնից. ոստիկանները հետապնդում են և գընդակների տարափի տակ գետին ձգում այդ աննկուն, անվախ պատանի հերոսին:

Այդպէս վերջանում է այս մատադ, վառվռուն և ուժեղ կեանքը, որ մեր անմոռաց, սիրելի ընկերը հերոսական վճռականութեամբ գրել էր հայրենիքի սեղանի առաջ կարճ ապրեց ապատագրական կորիւների պատմութիւնները:


Կեանքը մի մրրիկ էր, որ գիտէր թոշել կռւից կռիւ, յաղթանակից յաղթանակի:
Թո՛ղ անջնջելի մնայ նրա պայծառ անունը...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ՍԱՐՑԻՐՈՍ ՅԱՐՈՑԵԱՆ

(«ՅԱՐՈԾ»)

Մարտիրոս Յարոյեանը — մէկն է նրանցից, որ դուրս են եկել մոռացութեան խորշերից, աղքատութեան ու զրկանքների ծոցից՝ իրենց ծնող ժողովրդի կորացած մէջքն ուղղելու, հայ ցեղի ապրելու կորովք ցոյց տալու, նրանք, ժողովրդի այդ իսկակոն, համեստ հերոսները, որ անթիւ են և անշափ, մնում են անանուն, համարեածուացւած, նման երկնբի աստղերին, որ լոյս կուտան, բայց անուն ու թիւ չունին:



Մարտիրոս Յարոյեան

Մարտիրոսը ծնւել է Ալեքսանդրոպոլում 1880 թւին, չքաւոր ընտանիքից. սկզբնական կրթութիւնը ստացել է տեղական հայ-ծխական գպրոցում: Սակայն 1896 թւին ուսու կառավարութեան կարգադրութեամբ փակւելով հայ գպրոցները՝ հազարաւոր մանուկների հետ նա էլ փողոց է շպրտում: Փոխանակ ուրիշ տղաների պէս պարապ քաշ գալու, նո նւիրում է ընթերցանութեան, ձեռքն ընկած հայ գիրը կարգում. առանձնապէս սիրում է հայոց և ազգերի ազատագրական կորիւների պատմութիւնները:

Հայրը նրան մի կտոր հացի տեր դարձնելու համար տալիս է՝ բարտաշութեան — որմնադրութեան արհեստին, որ մասնաւորապէս զարգացած է Ալեքսանդրոպոլում: Այդ շրջանում նա նորից չի թողնում ընթերցանուած Ա.Ա.Ր.Ա.Ր.

թիւնը, հաւաքում է իր գլխին մի բանի ընկերներ, միասին կարգում են, չետևում են յեղափոխական հրատարակութիւններին, և նոյնիսկ իրենց չափազանց սուշ միջացներով Ծիրակի գիւղերից մէկում մի գաղտնի դրադարան են պահում Նրա հարուստ հոգին հանգիստ չի գտնում արհետի մէջ, շուտով թողնում է արհետը և ամբողջապէս յանձնում է յեղափոխական գործունեութեան, որ այդ թւականներում Ալեքսանդրօպոլում շատ թոյլ էր, բայց և այնպէս մի խմբակ կար, որ լուս ու մունջ շարունակում էր յեղափոխական գործը—զենք ձեռք բերել և ուղարկել թիւրքիա: Եր շրջանի երիտասարդներից խմբեր է կազմում—մարտական և գրամական, նոյնիսկ կարողանում է կանացից ել մի խումբ կազմել—„Սօսի“ անունով (Սերոբի կող անունը), որը ժամանակագրական կարգով առաջին կանացի խումբն է լինում Ալեքսանդրօպոլում:

Մարտիրոսը, որ այսուհետեւ „Յարօ“ անունով է յայտնում, ընկում է գիւղերը, թէ խմբեր կազմում՝ քարոզելով յեղափոխական գաղափարը, թէ փոքրիկ դրադարաններ հիմնում: Առանձնապէս մի խմբակ էլ է կազմում, իսուզարկութեամբ, որի գործն է լինում: Հետեւ թիւրքերին, որ Տաճկաստանից դալիս էին զենքեր գնելու քիչ չե պատահել, որ նրանք կամ խանգարել են զենք գնելը կամ խլել են զենքերը, կամ այդ թիւրք գործակալներին ոտով-գլխով անյայտացրել են...

1902 թւի պետական զօրահաւաքին՝ Յարօին վիճակում է զինւոր լինել և գնում է Խուսաստան. սահայն մի բանի ամիս յետոյ, նա փախչում է զինւորական ծառայութիւնից, դալիս է կավկաս Թիւրքա-Հայաստան անցնելու համար: Արայ է հասնում 1903 թւականը—այդ պատմական տարին՝ հայ եկեղեցիների կալւածքների դրաւման տարին: Ժողովրդական համատարած խանդափառութեան այդ շրջանում պակաս չէին և մատնիներն ու լրտեսները, որ ստերում էին այդ հերոսական օրերը: Դրանցից մէկն էր ոմն կաւալեր Պետրոս Կարապետեան՝ Կարսի գաւառապետի թիկնապահը և Յ. Յ. Դաշնակցութեան որոշումով, Յարօն օգոստոսի առաջին օրերին Ալեքսանդրօպոլում, ահագին բազմութեան մէջ, ատրճանակի մի բանի հարւածներով վերջ է տալիս այդ ամարդ հայի կեանքին:

Այնուհետև Յարօն կարսում է՝ Պատրաստում էր Հայաստան գնալ Խանի մեծ խումբը: Յարօն Փեղայի է, Ասկայն, Կարսի կենու: Կօմիտէի կարգադրութեամբ նա յետ է ընկում կատարելու կարսեցի Ծարիֆ Լաշիմ-Քէկովի տերրօրը: այդ հարուստ, դիրքով թիւրքը ուսուպետական պաշտօնեայ էր և միենոյն ժամանակ թիւրք կառավարութեան գործակալ, որ շարունակ իր կազմակերպած լրտեսների միջոցով լուրեր էր հաւաքում ու հազորգում: Պաշնակցութեան՝ գործունեութեան և խըմբերի մասին թիւրք կառավարութեանը: Օրը ցերեկով

Յարօն սպանում է նրան, ոստիկանը՝ Հետապնդում և Յարօյին, սակայն խիզախ Փեղային ծանր վիրաւորում է այդ ոստիկանին, և ազատում, գնում, միանում Խանի խմբին:

Յարօն՝ իրեւ ձիւորուածապահ՝ խմբի հետ անցնում է սահմանը Յայտնի են Խանդադարում, բոցիկի սարում և բասենի դաշտերում: Յայտնի է նոյնպէս այդ կորովի խմբի անսահմանորէն ցաւալի վախճանը—1903 թւի սեպտեմբերի կիսին: Խումբը մնալով առանց փամփուշտի և հացի, օրհասական կուր է մզում, ուր ընկնում են ահագին թւով ուղամիկներ: ազատում են մի երեսուն հոգի միայն: Յարօն ևս ընկնում է:

Յարիներ մնացին մեր նւիրական հերոսների նշխարները լեռների և ձորերի մէջ, վայրի հաւեցերի կերակուր, անձրւեի, ձիւնի և բամու բերան: Հայ գիւղացիները սիրու չէին անում անցնել այդ սրբազն վայրով որովհետև թիւրք գիւղերի սահմանների մէջն է գտնում: Միայն երբեմն-երբեմն վախով, գիշերները գաղտնի, ամենայն երկիւղածութեամբ հաւաքում էին մեր նոր վկանների ցիր ու ցան մասունքները, որ իբրև նոր կեանքի Յարութեան սերմեր ցանւած են հայոց աշխարհի արիւնուահարեւմ: Հաւաքում են և թաղում եկեղեցիների գաւիթներում:

Սակայն, սամանեան սահմանադրութեան առաջին իսկ օրերում, թիւրք գիւղացիները հայերի հետ գնացին, լոլով ու համբուրելով հաւեցեցին մնացած նշխարները՝ թողութիւն աղեղսելով իրենց անգիտակից յանցանքի համար և մեծ հանդիսով ամփոփեցին հայոց գերեզմանանը...

Ո՞վ գիտէ, սակայն, թէ արդեօք Յարօի նշխարները հանգչում են եղբայրական շիրմի մէջ, թէ՝ զուրն ու քամին, հաւըն ու թռչունը բշել-տարել են ձորից ձոր և սարից սար, և ո՞ր բարի տակ թաղել, ո՞ր հողի մէջ լիսունել...

Յարօի Ալեքսանդրօպոլի ընկերները կենսագրական տեղեկութիւններ հաղորդելով նրա մասին, այսպէս են վերջացնում գրութիւնը—„Յարօն անկեղծ և եռանդուն յեղափոխական էր. և նրա վերջը պսակւեց անձնւիրութեան պաշտելի օրինակով. թող մեր ընկերոջ շերիմը անյայտ լինի, բայց մեր սիրու նրա շիրիմն է միշտ կենդանի պահելու և պատկերացնելու նրա սուրբ յիշատակը“:

ՀԱՅ-ԳՈՒՍԱԽԱՆ

ՆԱՑԱՐ

Յաւով ենք արձանագրում այդ վաղաժամ և անակնկալ մահը: Առողջ, զւարթ, կենսուրախ մի երիտասարդ, որ աբսորի զրկանքներում, նիւթական ծայրագոյն թշւա-

ռութեան մէջ՝ երբէք ընկճէ ել չգիտէր, որովհետեւ ապրում էր մատոր, զաղափարական մնունգով, խօսում էր անդաշար ու խանդափառ, պաշտպանում էր եռանդով ու համոզումով ընկերական շըջաններում իր սիրած թեզիսները և պատրաստ էր իր կեանքը զոհաբերել յանուն այդ թեզիսներին

ვე ბანებ, თაგეთოւორ պაտაհაր էრ, որ կտրեց այդ հա-
շամակրելի ქեუնეի թე լը և, ատաձեն մեռաւ մի բանի ամիս
առ աջ, Ա. Պոլսում, հեռու իր կովկասեան հայրենիքից, գեղա-
ծիծաղ Արաստանից, ուր գործել էր 1905—1906-ի եր-
կունքի օրերում և ուսկից տարագրւել էր նախ Ռուսաստան
ապա — նիւթական հոգսերի ճամբառ վրայ — դեպի բօս-
ֆօրի եզերքը: Այդտեղ նա օտար չեր զգում ինքզինքը,
գրեթե միշտ մերայնոց շրջանում էր, մեզ պէս մտածող
ու զգացող, մեզ պէս տարագիր և ըմբոստ: Հանգու-
ցեալը ծագումով վրացի էր, բայց պատկանում էր մի-
ջազդային յեղափոխական բանակին, գործել էր ուս-
սոցիալիստ-յեղափոխականների շարքերում, գրել էր բազ-
մաթիւ և շահեկան յօդւածներ ազգային ու ազրա-
րային խնդիրների մասին, ո Գորցեվ՝ կեղծանունով: Գրիչ
ուներ և գիտութիւն — և գրա հետ մի ազնիւ, շիտակ
հոգի, մի անկեղծ, անտշառ միտք, որ այնքան, դժբախ-
տաբար, հազւագիւտ է վրացական ու ընդհանրապէս
կովկասեան հրապարակագրութեան աշխարհում...

Այդ հանգամանքն իսկ առանձնապես զգալի է դարձնում մեզ Համար՝ Կատաձեկի ողբերքական մահը:

q u s w u q u u

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ

Y U P U Q U S U O H P H H

VIII

4.0 PDR-00000000000000000000000000000000

ԱՐԵՎՈՒՄԾՈՅՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

13

Թիւրքանայ ուսանողութիւնը 40-ական թավախնեւում. — Ազգեցութիւններ. — Պատմական անցելեր և պարփեսն Քիւնուոր. — Յեղափոխութիւններ. — Կամացաւաթրութիւն. — Լամութիւնի հայր Մուշադան Գարեգինի բացումն. — Թիւրքանայ համացարանականի և համեային գործիչի ժամկ. — Գրիգոր Օւսնան՝ վաղեմի հոյ ուսանողութեան մասին. — Խռովնեան և Պալեան. — Ազգային Ասմանանալու թեան բացումն. — Հայ մամալը Թիւրքիայ մէջ. — Հայեանաթրական հեար. — Հայ Ալիսան, իր գեմքը և իր գործը. — Հայիսկան բրուտուցման ժամանակի. —

Գառասնական թւականներում ենու

Հայ ուսանողութիւնը երևան է գալիս արևմտեան ուսման տաճարներում, հայ առաջին համապատասխան կազմութեան

Ները *) — ձիբրուտ, տոկուն, ուսումնասէր — ագահօրէն կլանում են եւրոպական մաքի արդիւկները, որպէս զի բան պատւաստելու շայրենիքի խոպան միջակայրին:

Եւ թիւրբահայ կերածնութեան այդ առաջին ծիծեռ-
նակները առգորւած են ընդհանրապէս արմատակա-
ղաւանակներով, զեմօկրատիզմի, ումկավարութեան հա-
ւատամբով, և խանդակառ, ազատաշունչ հայրենասի-
րութեամբ:

Պարիզը կենտրոն է և սիրւած ժամադրավայր մեր
փոքրաթիւ ուսումնատենչ երիտասարդութեան Պարիզի
մէջ հաստատել էր Միխիթարեան-Պուրագեան վարչ
ժարանը, Պարիզի մէջ խմբւել էր ապագայ հայ գործ
ծիչների պէտք ը. — Կիկողայոս Պալեան, Խաչատուր
Պարտիզպան, Խաչատուր Միսաքեան, Կառապետ Ռուշ
սինեան, Գրիգոր Աղաթօն, Խարապետ Խթիւնեան,
Գաբրիէլ Այգազօվսկի, Ամբրոսիոս Գալֆայեան, Խորեն
Գալֆայեան, Յովսէփ Ծիշմանեան (Ծերենց) և ուրիշներ
Պարիզը կենտրոն էր և ամբողջ մտածող աշխարհի
ուշադրութեան...

Հազլագիւտ մի շրջան էր: Ըմբռատութեան շունչ էր անցնում ամբողջ արևմտեան հւրովայով և Պարիկը պատրաստում էր 1848-ի աշխարհագործ փոթորիկը:

Եեղափոխական խօսքը հնչում էր գաղտնի, գաւա-
դրական ակումբներում — Բլանկիների որոտախօս շըր-
թունքներով — յեղափոխական միտքը այլ և այլ ձևերով
արծարծում էր մամուլի ու գրականութեան մէջ, բառ-
բառում էր անգամ համալսարանական ամբիոններից:
Լամար տին, Անիկոր Հիւգո, Դը Միւսոն
հնչեցնում էին իրենց գիւթիչ քնարի գալայլները.
Օգիւստ Կոնտ ծանուցանում էր աշխարհին պօզի-
տիվիզմի արմատական, փրկարար հաւատամբը. Միշլէ
և Գիզո հրատարակում էին իրենց անմահ գործերը.
առաջինը Ֆրանսիական Յեղափոխութեան դրւագներն
էր պատմում իր թեատրո, անզուգական լեզվով ու
ոճով, երկրորդը համաշխարհային բաղաքակրթութեան
ընթացքն էր ուրուագծում իր ներհուն գիտունու-
թեամբ, ճշմարտախօս գրով. երկուսն էլ հռչակում էին
իրենց մեծ հայրենիքի առաջապահ դերը ընդ-
հանուր բաղաքակրթութեան պրօցեսի մէջ: Լոգ գար
քին է, մի այլ հանձար, շարունակում էր վօլտէրեան
աւանդութիւնը, Թունաւոր ոճով խարազանում կրօնի ու
կղերի կեղծիբները, մարդկութեան խզի վրայ լեռնա-
ցած նախապաշարումներն ու սնապաշտութիւնները: Խւ-
պարիզեան ամբիոններից որոտում էր ազատ մաքի-
քարովը նոր կեանքի ծարաւի երիտասարդութեան
ականջներին... Արայ է հասնում, վերջապէս, Ոետ ու բ-

^{*)} Եզել են, անչուշտ, հայ ուսանողներ նաև քառամահական թւերից առաջ, բայց բուն խմբական հոսանք, որոց գունակութեամբ, ծայր է տալիս 40-ական թւականներին:

շարեան Յեղափոխութիւնը (1848 թ.), որ անմիջապէս փոթոքում է եւրոպական ցամաքը, հրդեհելով մի շարք մայրաքաղաքներ, խորտակելով միապետական գահերը...

Ահա մի այդպիսի պատմական մթնոլորտում էր ուսանում հայ անդրանիկ համալսարանական բոյլը՝ Նրա անդամները հանդիսատես են պատմութեան այդ վեհ դրամաներին, ոմանք նոյնիսկ փորձում են իրենց բաժին մասնակցութիւնն ունենալ Պարիզը Նրանց գասահարակն էր և ոգեսրութեան աղբիւրը, պարիզեան եռող կաթսայի մէջ Նրանց զգայուն հոգին կրում էր ուժգնօրէն անցբերի ազգեցութիւնը, որդեգրում Յեղափոխութեան պանծալի սկզբունքները, որդեգրում մասնաւնդ հայրենիքի ու ժողովրդի պաշտան մը մունքը... և սրտի կոկիծով յիշում էին Նրանք իրենց փոքրիկ հայրենիքը Ասիական Արևելքում, ծրարած ստրկութեան և խուարի անթափանցիկ մառախուղով...

Ցիշում էին և խորհում և յղանում ներագիրները... Ծրագիրներ ազգային վերածնութեան, ոչ միայն մտաւոր, կուլտուրական, այլ և... բաղաքական Այդակեղ և յղացում 1863-ի Աահմանադրութեան նախագիծը, ի գէմս նհամաստեղութեան երկու խոչըր դէմքերի սիկողայոս Պալեանի և Կահապետ Ռուսինեանի:

Որքա՞ն յոյզեր ու յոյսեր, որպիսի տենդային խանդակառութեան օրերի եւ ինչպէս չվառւէր այդ ազնիւ երիտասարդութիւնը, ինչպէս նա չըռնւէր հայրենասիրութեան տենդով այդ հազւագիւտ օրերում, երբ ինքը Փրանսիական հանրապետութեան արտաքին գործերի մինիստրը, և ամարտին, հանդիսաւոր կերպով, Մուրադեան վարժարանի բացման իր ճառի մէջ, տալիս էր հայ ազգին հասունութեան վկայական, ներբողում էր Նրա լեզուն, որոշում էր Նրա գերը, արժեքը...

„La République Française—ասում էր տիեզերահռչակ բանաստեղծը, դիմելով իր առջե համամբաւծ հայազգի հանդիսականներին *)—envisage la grande question de la régénération orientale...

„... Les germes de la nationalité orientale dont vous êtes l'un des plus puissants rameaux, se développent... en France... L'étude de votre belle langue arménienne est utile aux français et réciproquement**)... (Փրանսիական Հանրապետութիւնը իր մտածողութեան առարկայ դարձրած և Արևելքի վերածութեան մեծ խնդիրը... Սաղմերը արևելեան ազգայնութեան, որի ամենակենսունակ ճիւղերից մինն էք դուք, դարգանում են Փրանսիայում... Զեր հայական սիրութեան առաջական գաղաքանի մէջ այդպիս առաջիկ էն, որ երկրագործութիւն, մերենագործութիւն, ճարտարարեական թիւն, վաճառականութիւն, բժշկութիւն ուվրին”*)

Եղակի ուսումնասիրութիւնը օգտակար է Փրանսիացիներին և—փոխադարձաբար) ..

* * *

Հոյ ուսանողները հետամուտ էին մեծ մասամբ դործանական գիտելիքների, ընտրել էին այլ և այլ մասնաշխալեր, ոմանք բժշկութիւն, ուրիշները՝ ճարտարագիւտութիւն, որիշները՝ մանկավարժութիւն, մի երկուսը՝ աստւածաբանութիւն, գործնական մասակարարեց էր իր արդիւնքները տիրապետող ցեղին, չեր այլ ևս կատարելագործում և 19-րդ դարի առաջին կիսում՝ չեր այլ ևս գոյացնում մարդկանց պահանջները: Անգամ թիւրբի — եւրոպաբնակ թիւրբի — կենցաղն ու ծաշակը բաւականաչափ նրբացել էին և պահանջները բացմացել, մինչդեռ հայ արհեստը մնացել էր քարացած իր հինաւուրց ձեւերի մէջ: Պօլսի և Զմիւռնիայի թիւրբը սկսել էր հագնւել եւրոպական ճաշակով — այդ վերջինը մուտք էր գործել Նրա նիստ ու կացի մէջ: Պէտք էր զարկ տալ ճարտարարւեստին, ընդորինակել եւրոպային: Եւ պէտք էր շտապել... Ահա թէ ինչու ոգործնական կրթութեան տենչը առանձնապէս շշշտում էր այն ժամանակւայ թիւրբահայ հասարակութեան մէջ և գրեթէ արհամարհւած էր անօտականը, ովերացականը: Դոյն երևոյթը, կարելի է տաել, աւանդաբար պահպանւել է մինչև օրս: Այդ արհամարհանըը յայտնապէս բարզուում էր թիւրբահայոց նորաբողոք մամուլի մէջ: Քառասնական թւականների վերջերում, անտեսական դիտութիւնների ամենայայտնի ժողովրդականացնողը, օօրայի հայաստան լրագրի մէջ յորդոր էր կարգում հայ ուսանող երիտասարդութեանը՝ ոյժ տալ նախ նհանագ վաստը կերպութեան գիտութիւններուն, ոչ այնքան լեզւագիտութեան, գրականութեան, փիլիսոփայութեան:

Մեզի առաւել պէտք եղածը անանկ մարդիկ են, որ երկրագործութիւն, մերենագործութիւն, ճարտարարեական թիւն, վաճառականութիւն, բժշկութիւն ուվրին”*)

Դոյն նհանագ վաստը էր գեռ 1846 թ. յունիս 6-ին:

„Հինգ-վեց տարւան մէջ ազգիս երիտասարդներէն շատ հոգի գեղի եւրոպայի զանազան կողմերը գիտեցին, ուսան համար ծարաւի օրուերնին զովացուցին... և ասոնցմէ կանուխ ուորի ելլունները շահաւեա արհեստնին ձեռք բերելով, արդէն դարձան իրենց հայրենիքը և... ձեռքերնուն հկած նպաստն ալ շեն խոյեր ազգին”...)

Դրանց մէջ էր Յարութիւն Յատեան, որ յետոյ գար-

*) Փետրւարեան Յեղափախութիւնց քիչ յետոյ էր:

**) Lamartine, Discours lors de l'inauguration à Paris du Collège arménien de Samuel Moorat.

ձաւ Արթին փաշա, գրեթե դեկավար թիւրբիոյ արտաքին քաղաքականութեան:

Այդպէս էր նշանաբանը: Կեանքը, սակայն, պատմական բացառիկ վայրկեանը մղում էր հայ ուսանողներին և դեպի Սօրբօնի այլ ամբիոններ, ուսկից նրանք կարող էին լսել նույն զերացական կամ ուրիշ խօսքով քաղաքան ու հասարակական գիտութիւնների վերջին խօսքը: Ասում էին նրանք այդ գիտութիւնները, ըստ երևոյթին կցկառուր, պատմակաբար, ի մի ջի այլութիւնը էին և վառում: Սիրտերը բարձրանում էին և ուժգին բարախում ֆրանսիական անցքերի ժխորի մէջ, յեղափոխական հռետորութեան թօվիչ ազգեցութեան տակ:

Այդ զերջինը մշակում է, մարզում թիւրբահայ երիտասարդին, պօլսեցուն, որ արդէն իսկ արտիստ է ի ծնե, իր բնութեամբ, խառնւածքով նաև հետևում է իր գործնական մասնաճիշդին, գնում է երբեմնապէս ունկնդրելու Ոօրբօնի փիլիսոփիային ու պատմագրին, սակայն նրա ուշքն ու միտքը գրաված են բանաստեղծների քնարաշունչ մարզաներով, բեմասաց բարողիչների մեծագորդ ճառերով... Նրա միտքը գործում է, զգացմունքը՝ աւելի ևս քինքն, Գիզոն, Կանոն ազգում են թիւրբահայ ուսանողի հոգու և մտայնութեան վրայ բայց անհամեմատ աւելի են ազգում հիւգօն և Լամարտինը:

Այն ժամանակից, կարելի է ասել, գարբնւեց թիւրբահայ մասաւորականի և հանրային գործիչի տիպը: Աւելի ճարտասան՝ բան հետախոյզ-հրապարակագիր Աւելի բանաստեղծ՝ բան մտածողուսութափիրոց: Եւ երբ թերթում էր թիւրբահայոց մամուլը XIX գարի քառասնական թւականներից, չեք կարող չնկատել այն ծայրայեղ մտաւոր աղքատութիւնը, որ տիրում է նրա մէջ: Ամբողջ տասնեակ տարիների ահագին տարածութեան վրայ՝ դուք հազիւ կը գտնէք մի բանի քիշշատ լուրջ ուսումնասիրութիւն՝ հասարակական, տնտեսական կամ քաղաքական խնդիրների շուրջ:

Այդ տիպը հարազատութեամբ գտնում էր թիւրբահայոց զարգացման բոլոր շրջաններում, այդ տիպի հիմնագծերը մենք աենում ենք ամեն կարգի հանրային ու քաղաքական գործիչների մէջ, անդամ նրանց որոնց վիճակւած էր առաջնակարգ գեր խաղալու ոչ միայն իրենց հարազատ հայրենիքի, այլ և ամբողջ թիւրբիոյ քաղաքական ու դիւնագիտական էլեզիւսիօնի մէջ:

Բանաստեղծ էր Գրիգոր Օտեան, օսմանեան սահմանագրութեան նշանաւոր ուսմէփիրան, որ մէկն էր 1848-ի գաղափարներով սնւած նաև համաստեղութեան անդամներից: Երբ նա գրում է 40-ական թւականների հայ մտաւոր սերնդի մասին, նրա կրած ֆրանսիական ազգեցութիւնների ու հովերի մասին, — ամենից ուժով

ու խանդավառութեամբ նա ներբողում է „Լամարթինի, թիւրբիոյի, կրպօի զբարձրաթորիչն պերճախօսութիւն“... ու Բանաստեղծ մը կը նախագահէր (փետրւարեան) յեղափոխութեան *), բանաստեղծ մը, աւազ որ և այնքան պիտի ներգործ էր իմ կեանքիս վրայ ալ... Այսպէս է գրում Միթհատ փաշայի հոչակաւոր գործակիցը 1879-ին հրատարակած Առուսինեանի Փիլիպ առ փայտ թեառ գասագրի իր հակիրճ նոխարանում:

Բանաստեղծ էր Նիկողայան Պալե նա, որ համարում է 1863-ի մեր Ազգային Սահմանադրութեան գլխաւոր նախադրդիչ (promoteur)... Անք իսկ էր աւին և յափշտակութիւն... ասում է նրա մասին Գրիգոր Օտեան, նոյն նախարանի մէջ:

Բանաստեղծ էր Նահապետ Առուսինեանը —Պալեանի սիրած և անբաժան ընկերը, որի հետ միասին երկար գիշերներ որոճել էին Պարիսում իրենց ներբական ու հայրենական ծրագիրները:

Մինը, Պալեան, հետևում էր Լդգար Քինէին, միւսը, Առուսինեան՝ Անկոտ Կուզէնին: Վարտելով իրենց մասնագիրը և իրացնելով 48 թւականի աւետարանը՝ երկու ընկերները որոշում են ի գործ գնել այն՝ ազգային կեանբում:

Դննդունայն ճգնի մարդ ճողովրել ազգին ազգեցութենքն՝ — ասում է իրաւամբ Օտեան: Ուշ ազգը՝ առաջին բառն էր, զոր արտասանեցին Պալեան ու Առուսինեան, երբ միացան սոյն առջերս գրողին հետ: 1849-ին (մի այլ վկայութեամբ՝ 1851-ին) Նահապետ Առուսինեան, իրեւ արդէն բժշկապետ, վերագառնում է Պոլիս, հաստատում է Խակիւտար, Օտեանի և այլ ընկերների հետ — և սկսում է Սահմանադրութեան մայրեմբակի գործունեութիւնը:

Այս օրերուն՝ Ազգը վարչութեան պէս բան որ ունէր, լեզուի պէս բան մը, գպրոցի պէս բան մը՝ (Օտեան):

Երեք-չորս երիտասարդները ձեռնարկում են կերպարանաւորելու այդ երեք որաները՝, որ եական պայմաններում են ազգային առաջադիմութեան: Եւ այդ ձեռնարկից պիտի ծնէր Ազգային Սահմանադրութիւնը **):

* Համարտինի մասին է խօսրը:

**) Անշուշտ, մէկ կամ երկու հայրենական երերի գործ չէր այդ ահագին ձեռնարկը և նրա իրազործումը՝ այն ժամանակայի պայմաններում կետնը, մասնաւորապէս թիւրբիոյ քաղաքական կեանքը պայմանները, լուրովայի միջամտութեան յարաւու սպառնալիքը, բրիստոնեայ հպատակներին գոհացում տալու յարածուն անհրաժեշտութիւնը — այդ բոլորը գիւրացնում էր հայկական երազների մասնակի իրականացումը: Բայց և, անշուշտ, անհատները, իրենց կորովի ասիանեանութեամբ, իրենց յամա հետապնդումով մեծապէս զարկ են աւել նոյն երազների իրականացման: Այդ անհատների շարբումն են նաև Յակոբի կը եւան, գործուր Սերգի չեն, որոնք նոյնպէս 40-ական թւական-

Сատ աքնեցին, տանջւեցին. շատ պայքարներ մղեցին. Օտեան առումնէ մելամաղօրէն (1879-ին).

Երբ այնքան տարիներէ եարբ մորզով կը յածիմ այն ժամանակներուն մէջ, ուր լաւ պատերազմը պատերազմեցնք, լուսոյ՝ խուարի դէմ, ժողովրդականութեան՝ ամբույթեան գէմ և սահմանադրութեան՝ եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց գէմ, երբ ազ թիս առջն կը բերեմ այնքան խոչընդուները, այնքան սպառնալիքները, այնքան աչ ու դոզը, այնքան վատանդը, որոց մէջն անցանը... զարմանքը կը պատէ և կ'ըսեմ. ի՞նչ վեհ է երիտասարդութիւնը...

* *

Աենսագրողները հազւագիւտ են, եղածներն էլ՝ խիստ ժատ—և բառասնական թեւքի մեր այդ պատւական երիտասարդութեան կետնըն ու գործը մնում են տակաւին ըլլուսաբանած:

Օտեան համեմատում է պարիզեան խմբի երկու մեծագոյն գէմբերը—Պալեան և Ռուսինեան—և զըստում է երկուսի միջն անվերտածելի ներհակութիւն.

Դիմիկողայս Պալեան... ինըն էր աւիւն ու յափշտակութիւն, մինչդեռ Ռուսինեան անխոռով խորհրդածութիւն էր... Մին անսայթ ար ընթանար զիծ երով շրջապատեալ, միւր

ներին, թերեւս անկախ մեր յիշատակած անհամաներից, յդացել են նոյն ծրագիրները, աշխատել են մինչոյն ուղղութեամբ: Խուռամ է, սակայն, թէ հայրենասէրների այդ գեղեցիկ շարանի մէջ կենարանական գէմքն է նեկողայս Պալեանը, որ իր կարող ազդեցութեամբ, իբրև պալատի ճարտարապետ, ամենից աւելի էր նպաստել Ամհամազրութեան խոպաղ նւաճճան և որ մեռել էր վաղաժամ, նախ քան իր երազն իրադորժիլը... Համեստ մարդու կատարած դերը մնացել էր բոլորին անյայտ. բոլորն էլ մոցել էին նրան: Բոլորը... բացի իր սիրեցեալ և անբաժան Ռուսինեանից, որ նոյնպէս տասնեակ տարիներ պահէլ էր այդ իրողութիւնը որոի խորըում, իբրև նւիրական մի գաղտնիք և միայն 1870 թւին, Ազգային ժողովի և գելտեմբերի նիստի մէջ, մի անշան միջադէպից (Յակոբ Պալեանի Հրաժարականից) ցնցած, արտառակելով՝ բաց է անում հայութեան առջեալ կարևոր գաղտնիքը, պատմում է հեծլլալով իր յուշերը պաշտելի ընկերոջ, նեկողայս Պալեանի մասին, պատմում է, թէ ինչպէս է նա աշխատել Ամհամազրութիւնը նւաճելու համար, թէ ինչպէս են 40-ական թւականներից համախմբւել նրա շուրջը ուրիշ գէմբեր, երբեմի ուստանդաւերը. Օտեան, Ազգաթօն և ինքը... Ռուսինեան յիշում է, վերջապէս, իր ընկերոջ վաղաժամ ու դժբախտ վախճանը և այդտեղ, ճառի վերջում, նրա կոկորդը սեղմուում է, ձայնը հատնում յուշերի, զգացումների ուժգին յորձաներից, հաեւորը թաղուում է ամբոխը և հեկեկալով գուրս է նետուում որսհից... Տեսարանը վերին աստիճանի յուղիչ է, ամբողջ ժողովը պահպանում է խորին, կրօնական լուսիթիւն, աստիճան այդ պատառուշ ճառից և արդ տիտուր ու անակնկալ յայտնութիւնից...

Ազգային ժողովի բարտուղարը արձանագրում է.

(Խարանը արտաշուրբան ի մորթին և յունիթիլի):

Տես Ատենագրութիւնը Ազգային ժողովը՝ (պաշտօնական հրատ. Ազգ. Պատրիարքալատի):

Խոյանար տատանեալ ի փոթորկաց և ի շանթիցն հարւածեալ՝ երեակայութեան բացած սփիւռներուն մէջ...

Համեմատութեան եզրակացութիւնը թւում է փոքրին բոնազրոսիկ: Ռուսինեանը, որ ներկայացւում է իրեն ունիսով խորհրդածութիւնն և հակոտնեայ ուլեւանի—ոչ պակաս աւիւնուտ էր, յափշտակւող, վավուուն ու թութուուն Այդ կողմից նա թերեւս կը գերազանցեր բոլոր միւնեներին: Զգացմունքի տիրապետութեան տակ նա երբեմն հասնում էր բորբոքման ու պաֆօսի գագթնակէտին և գործում էր անօրմալ, հիւանդագին թռիչքներ:

Այդ տաղանդաւոր կեսարացին *), անտարակոյս, հայ մատորական բոյի ամենաօրիժինալ գէմքն էր և գուցե միանգամայն ամենացայտուն ու ամենահարուստ ներկայացուցիչը, այն տիպարի, որ քիչ առաջ յատկանշեցինք: Նա մարմնացած լիրիզմ է և սրանչելի հսետոր: Մի հմայիչ լեզու և մի հազւագիւտ պերճախօսութիւն... Ընտիր, նուրբ, բարձրասլաց և ներդաշնակ: Առանց շինծու ժեստերի և գուեհիկ ճռումաբանութեան: Հայոց փորբիկ պարլամենտի զարդն էր, Ազգային ժողովի ոստիսակբեմբասաց^{**}: Լուսմ էին այդ սոխակին սիրով ու զմայլումով: Երբեմն, շղթայագերծ կեղեղից պէս դուրս էր նետում իր հունից, զգացումները յորդանում էին, համեկում նրա բովանդակ էռութիւնը, նա ճառում էր և հեկեկում, լալիս էր և լացացնում..

Այդպէս էր Ռուսինեանը: Բժիշկ էր և բանաստեղծ, ճարտասան էր և լեզվագէտ, փիլիսոփա, էր և հասարակական գործիչ, — ամեն բանով զբացւում էր, ամեն տեղ զարնուում էր նրա անխոնչ, մրրկւած ու որոնող հոգին: Կեանքի բոլոր շշապահներում ստանձնել էր ու փօրմատօրի, վերանորոգչի պաշտօն և անդադար յղանում էր պրօքէներ, ծրագրիրներ:

Սակայն... ուստապիսի ծրագիրներ էին—գասապարտած մեռնելու Բանաստեղծ՝ ռեֆօրմատօրի ցնորբներ էին, որ չէին կարող շօշափելի հետքեր թողնել սերունդների գիտակցութեան մէջ: Արդիշեակ, իր փայլուն ու բազմակողմանի ընդունակութիւնների հետ՝ Ռուսինեանն ուներ մեր յատկանշած տիպարի անխուսափելի գծերը... նա աւելի բանաստեղծ էր, բան մասծով: Աւելի փայլուն՝ քան խորունկ: Ոչ ներհուն բաղաբագէտ էր, ինչպէս ումանք կը պնդեն, ոչ էլ բաղաբական գործիչ:

Եթէ նա ծնած լինէր երրուպական միջավայրում, — իր լինէր իբրև զրագէտ կամ բանաստեղծ մի Հիւգո, մի Լամարտին, և իբրև բաղաբագէտ—մի Ֆիէռ, մի Գամբետու...

Այսպէս է ասում Ռուսինեանի նորագոյն կենսագողներից մինը. թժ. Աւնդէս Ամօրեայ^{***}ի իր շահեկան յօդւածաշարբում **):

*) Ծն. 1819 թ.—վախճ. 1876 թ..

**) Հանդ, Ամսոր.՝ 1902—903 թ..

Արդար լինենք մեր սիրելի հանգուցեալների գնա
հատման մէջ և անօգուտ չափազանցութիւններով շնաբ
յացնենք նրանց միշտակր:

Գամբետտա չէր կարող լինել թուսինեանը — ոչ իսկ
արևմտեան միջավայրում — քանի որ չուներ պահանջւած
արիստօնին ու համարձակութիւնը, Մի բռնաւոր արագ
կաշկանդել էր նրա բարձր, ազատատենչ հոգին, անդա-
մալութել էր ազգային վերածնութեան նրա թուիչքը՝ նա-
տառապում էր իր ցեղին, աւելի ճիշտ միջավայրին
յատուկ մտ ա վա խութե ե ա մբ, աւելի ճիշտ՝ երկ-
չոսութեամբ:

Ամուր գրկած ֆրանսիական Յեղափոխութեան նշանաբանները, երկար տարիներ նրանց երազած ու գուրգուրած՝ նա, սակայն, դողում էր, երբ նոյն այդ նշանաբանների անունով փորձում էին հայրենի միջավայրում բիշ թե շատ համարձակ քայլեր անել: Ֆրանսիական գաղափարները այն աստիճան վառ ել էին նրա զգայուն սիրտը, Ռօբեռպիէոի և Դանտօնի պաշտամունքը այն աստիճան գերել էր նրա ամբողջ եռթիւնը, որ նա զեռ ուսանողութեան տարիներում յօրինել էր նոր հայկական տարեց ու յաց, անւանելով ամիսները ֆրանսիական Յեղափոխութեան ընդունած անուններով՝

Germinal — Floréal — Prairial — Thermidor

Բուօսին — Շաղկին — Մարգին — Տօթար

(Ապրիլ — Մայիս — Յունիս — Օգոստոս)

Fructidor — Brumaire

માર્ગમાર — ઉત્તોન

(Установка дроби — это Таблица дробей):

Սակայն, այդ բոլորը լոկ թէօրիկ զառանցանքներ էին—սիրուն, մակերեսային ու գլատքալի բառախաղը Յեղափոխութեան գաղափարը հանդիպել էր հայկական կրաւորականութեան գրանիտեայ ապառաժին.. Առուսինեանը անդադար գուրս էր կոչում ուրուականներ և ինքն իսկ սարսափահար փախչում էր այդ ուրուականներից. Նա պաշտում էր Յեղափոխութիւնը, բայց և, անշուշտ, զարհուրում նրա նիւթած արեան թափօրներից, նա կուզերիր սեփական հայրենիքի ազատութիւն, — առանց, սակայն մի կաթիլ արիւնի... Նա երկնել էր իր ընկերներով հայկական Ասհմանադրութիւն, բայց ոբաղաբական բառն իսկ նա կուզեր գուրս վտարել ազգային շըշտներից. . .

Եւ Ազգային Ժողովի ստուակ-բեմբաստցը սովորաբար նստում էր լուս ու մունջ ազգի մեծ, հանդիսաւոր վայրկեաններին, երբ գաւառացի հայութեան աղիողորմ հեծեծանքը գալիս էր փոթորկելու Ղալաթայի անշուրք խորհրդաբանը. . . Այսէք, անգամ 70-ական թւականների տեսնային օրերի մէջ, Խրիմեանի պատրիարքութեան տագնապալի շրջանում, ուարմիր Տարեցոյցի հեղինակը գուրս չ'ելաւ իր ակամայ պապանձումից,

չարձագաներեց օրհասական ճիշերին, չմիացրեց իր պերծ
լեզուի շանթերը համազային բողոքին: Արա սիրալ
խռովում էր ժողովրդային տագնապավ, բայց նու դեմ
էր բողոքներին, նա կծկում էր բռնապետութեան
ստերի հանդեպ, սարսափում էր հնարաւոր պատիժ-
ներից: Գերագասում էր իր լքուած ու վիրաւոր ժողո-
վըրդի պէս հեծեծալ ու համբերել և կամացուկ երգել
իր լօրինած սրտառուց տաղը.

Երբ որ բացւին զաներն յառա
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր ըազգրիկ օգեր.
Երբ որ ծիծառն ի բայն դառնայ
Երբ որ ծառ երն հազնէին տերեւ,
Ցանկած տեսնել զիմշ Արթիկիսա,
Աշխարհ, որ ինձ ետուր արե...
...

Ամբողջ սերունդներ կրթւեցին այդ տաղավա

ԽԵՂԾ ԱՌՈՒՍԻՆԵԱՆԻ ՄՐԿՈՎԱ, այդ երգը մրմջալով,
ՀՅԱԺԵՂՄ ՄԵԼԵԳ աշխարհին ձմրան ահեղ սառնամանիք-
ների մէջ, ուր ծիծառն ու ծառերը սև էին հագել
ամենուրեք, ուր հայրենիքը տնքում էր ամենածանը
օր հասի տակ, ուր իր առջև փակւած էին չոյսին
բոլոր գոները...

100

Ա ԵՐԱԴԱՊԱՆՆԱՆՔ ԳԱՐՃԵՎԱԼ ՔԱՌԱՄՆԱԿԱՆ ԹՇՀԱԿԱՆՆԵՐԻՆ:
Ա ԵՎ ԱՆՑՔԻ ԱՆԻՒԾ ԱՊԱՎՋ ԷՐ ԺՂՈՎՄ ԳԱՆՊԱՂ, ԱՆՆՉՄԱ-
ԵԼԻ ԺՄԱԼԱՊՈՄՆԵՐՈՎԻ ԵՎ Մ Ա Մ Պ Ո ւ Է Ը, Ա յ դ ԿԵՎԱՆՑՔԻ
ՂՋՈՄ ՈՒ ԴԱԼՈՒԿ ԱՐՄԱՐԺԱՋՄԻԾԸ, ԱԿՍՈՎՄ ԷՐ ԿԱՄԱԳ-
ԱՄԱԳ ՈԳԻ ԱՊՆԵԼ և ԲԱՌԱՊՈԵԼ ՕՐԲԻՆԱԾՈՐԻ մարդկային
ԱՊՐԱԿՈՓԻ ԽՐՕՅ ԿԱՐՃԵԽ ՀԿԱՐ ԽԱԿ ՆԵՐԱ ԳԼԽԻԲՆ ԲԱՆԱ-
ԿԵՏՈՎԹԵԱՆ ԽԱՐԱՊԱՆԸ Հայ ՄԱԽՈՎԸ ազատ չէր, բայց
ԵՆՊՈՐԻ ՃԱՆԿԵՐՈՎՄ ԷԼ չէր: Ա յ դ տեղ ևս իշխող ՄԱՐԲԸ
Ուցահանում էր իր արհ ամարհ հոտ համբե-
ռ ղ ու թիւնը, ինչպէս բոլոր միւս ազգային հաս-
ատութիւնների վերաբերմամբ — գպրոցի, եկեղեցու
այլն Սակայն, եր կիւղը սարսափելի ու համաձա-
ակ պատուհասի պէս, կաշկանդել էր հայ գրողի միտքն
և հոգին. երկիւղը՝ ազատ խօսքի գործածութեան և
բա հետ կապւած վասնգների ու հարւածների հան-
էպ, նոյն երկիւղը՝ որ անդամալուծել էր Առուսինեան-
երի հայրենակարոս ոգին, հայրենակը կամըր...

Այսուամենայնիւ, հայ առաջին խմբագիրները խի-
ախում էին իրենց համեստ հրապարակութիւնների մէջ
զգային-հասարակական մի քանի խնդիրներ դնել ու
լորձարծել և մի քանի յորդոր ու հրահանգներ ար-
ակել Մերժ ընդ մերժ և Պօլսի, Զմիւռնիայի հայ-
ական հրապարակագրութիւնը համարձակ թափ էր
ունում, ասես իսպառ ազատագրւած բռնաւոր հսկո-
ւոթիւնից Մերժ ընդ մերժ ազգի ու հայրենիքի
արտաշռունչ նշանաբաները հնում էին բարձրացաւյն

ներդում ու աճապարուս, ասես այն տիսուր գիտակցութեամբ՝ որ ազատութեան այդ շրջանը վաղանցուկ է, է ֆեմեր, պատահական, որ նա շուտով պիտի տեղի տայ մտապան և մարդասպան խռութիւն...

Կորաբանչիւր հապար է իր ազգով — գրում է „Հայաստան” թերթը 1846 թւին — որը՝ իր ազգի հնութեամբ, որը՝ իր հին գիտութեամբ եամբ, որը՝ իր հարստութեամբ, ամեն մի ազգ իրաւունք ունի պարծենալու իր այս կամ այն յատկութեամբ... Առան զի նախանձութիւնը ամեն ազգի մէջ մէկ յատուկ ձիբը պարզեցէր է... Միեր ազգը պարծենալու բան մը չունի՞ մի՞ Հայկին օրեն մինչեւ աս օրս հայ անունով մնալը քիչ ազնւականութիւն կը համարուի իրեն. աչա ասով թուղ պարծի... Հնեա ալ դեռ ախարհիս վրայ շատ ազգեր խորին քնի մէջ... իրեն արթնալը, ուսման յուսածաղի իմաւթեանը համար այսափ ընկերութիւններ, դպրոցներ հաստատելը քիչ իմաստութիւն կը համարի իրեն. աչա ասոնցմով թող պարծի... Արենին... զո՞ւն, որ միշտ յառաջ երթաւուն վրայ են նէ, մի՛ յուսահատիր, մի՛ զհատիր, հապա յուսու՛, արիացիր և մի՛ ամաչիր Հայ եմ ըսելու...”

Եւ ապա թերթը գառնապէս գանգատում է Հայոց օտարամոլութեան առթիւ... „Խոսիս — ուուերէն կը խօսին, Պարսկաստան — պարսկերէն, Թիւրքիա — տաճկերէն...” Ծանուցանում է վառ ան գը և միսիթարւում... որ „5—6 տարիէ ի վեր, շնորհիւ մի բռուն հայ մտաւորականներու, վարժարաններ կը հիմնուին և հայ աշակերտները Հայերէն գրել-կարդալ ու խօսիլ սորվեցնելու կ'աշխատին”*):

Մի ճառի մէջ, զետեղւած նոյն թերթի 1846 թ. 3 օգոստի համարում, — մի խանդապառ ներբող ուսման ու գիտութեան հասցեին... Դրանց մէջ է ազգի փրկութիւնը.

„Արթնցի՛ր, Հայոց Ազգ, այս մահակաւեր ազիտութեան թուրթենէն, միտք ըեր առաջին ունեցած փառքը, ողբա՛ հիմական թշուառութեան վլաճկը, ուրիշ լուսաւորիշ ազգերէն օրինակ առ... Կարասուները պայծառ պահէնու ջանքը ըրէ, Հայկական լեզուն աղէկ մշակէ, օգտակար լեզուներ և ազտական գիտութիւններ ուսանելու հետեւ... ասոնցմով միայն կարող կրլաս երջանկութեան վախճանը հասնի”...

Գիտութիւնը — գերագոյն գարմանը Տգիտութիւնն էր, որ քանդեց Հայաստանի տունը.

„Ի՞նչ ըրաւ Հայոց տունն աւրող արինախանձ ազիտութեանը... Բաւակա՞ն եղաւ, Հայաստա՞ն աշխարհ, բաւակա՞ն եղաւ այն անգութե բանաւորին խրոխտ լուծին տակը շարաշար բաշած պանխատութիւննին, արթնցի՛ր, բա՛ց գրկասուն սիրտգ, ժողուէ ցիր ու ցան եղած զաւակները. աչա՛ բախտի նշոյլը ծագող բարեկատեհ ժամ. աչա՛ զուարձալի օրեր գուշակող պանչելի գարնան գուռները, հարեցո՛ւր այն ասուածային հրովր երկնարեր լեռներուդ վրայէն պնդացեալ սառնումանիցը. կանանչազեղ զարդարէ բնութեան այն հրաշալի գետերէն ջուր խմող գաշտերդ...” (14 դեկտ. 1846):

Առաջին թոթովանքներն են Հայրենասիրական հրապակագրութեան, առաջին ուժեղ յորդորները՝ դէպի ազգային խթանաձանաշութիւն...

Լոկ ի՞նչ է Հայրենիքը».

Այս աելլը, ուր որ մէկը աշխարհը կուղայ, ուր էայ իր նախնեացը նշխարներն ու դամբարանները. և այդ նախնեաց նահատակութիւններուն և ուրիշ ըրած գործերուն յիշասակարանները” (Հայաստան, 19 հոկտ. 1846):

Ի՞նչ է անհատի պարտականութիւնը առ Հայրենիքը.

Պէտք է, որ մարդո գիտնայ ազգին համար իր շահը յառնալ, իր ինչքը, սոսցւածքը, իր կեռնըն անդամ ազգին աղեկութեանը և պատույն ներել...

Սակայն... մարդո իրաւունք չունի ազգին ազէկութիւնը համար գէշութիւն մը բնելու կամ ուրիշի մը իրաւունքին դպշելու...”

Այս վերջին յայտարարութիւնը — ժամանակակից ինտերնացիօնալիզմի, միջազգայնութեան ոգով — մի սուկ պատահար է, *accident*, որ գուցէ ակամայ դուրս է թուել հայ խրագրի գրչի տակից, և որ յաճախ չի կընեւում այնուհետեւ թիւրբահայոց մամուլի մէջ:

Դրա հակառակ՝ աստիճանաբար և *increasingly* շեշտում է կորովի, երբեմն նոյնիսկ տարամերժ, յարձակողական ազդասիրութիւնը — որ միանգամայն բնական է ազգային էլույթիայի այն նախնական հանդգրւաւում են Հայրենասիրական խանդապառող յորդորները, հորովածին է հարիւրաւոր ձևերով այն մեծ, վերացական գաղափարը, որ գարձաւ այնուհետեւ ամեն մի թիւրբահայի նւիրական սրբութիւն, որի անունով երգում է նա և այսօր.

— ||. Զ. Գ. Բ.:

Կռուերը — միշտ աւելի պաթեթիկ, յորդորները — միշտ աւելի մոլեգնուու ու ուզմաշունչ ձեռաշետէ դուրս են կոչում Արամերի ու Թորգոմերի ստերները, խօսում են Հայկական մեծագործ ոգույն բնատուր ձիբբի՛ մասին, յիշում են և զիշէներին, Անյազթներին, յիշում են ոմարդկային ազգի խանձարուր Հայաստան աշխարհ...” Մի թիւրբահայ ճամբրորդ, վերադառնալով Անիի աւերակներից՝ ողբ է կարգում և հրաւիրում իր Հայրենական լեռներին՝ գրէ ժիւն դրութեան (մասնաւորապէս, Հայրենիքի ներքին թշնամիների դէմ)...

“Ո՛, ազգիւ Հայոց ազգ, քաջապէս խօրհէ զրէժ առնելու եղանակդ... Որչափ սոսկալի պատիժ տաս նէ, արժանի է... Որչոց որդի, կտակաւ աւանդէ մինչեւ յաւիտեան զանոնը խայտառակել և պատճել և զրէժ պահանջել”...

Հայաստան աշխարհ՝ իր ամեն փառքերէն զրկւած, իր մեծութիւնները կորոնցուցած, երկիրները կոզոպտաւած, իրեն բարձր Արարատեան գլուխը տրտութեան մութ ու խաւար քողով ծածկւած”...

Աչա և մի խանդապառ յուշ ու ներբող՝ “Տանն Արշակունեաց”.

Ո՞վ քաջցր անուն, Հայաստանեայց անցաւոր մեծագործութեանց հիմնադիր... բու փառքը ո՞վ կրնայ պատմել, ո՞ւր են քու զաւկըներդ, ո՞ւր է բու անուանակիր ժողովուրդը քեզէ մեացած... ո՞վ մեացորդը տանն Արշակունեաց”*)...

*) Հայաստան, 27 յուլիս 1846 թ.

Մի յորդառատ լիրիզմ և մի ջերմ, կարօտակեզ հայրենասիրութիւն, որ յիշեցնում են Լեօպարդի սբանչելի աղջերը *).

*O, patria mia!... Dove la forza antica?
Dove l'armi e il valore e la costanza?
Chi ti disse il brando?
Chi ti tradi?... Dove caderi o quando
Da tanta altezza in così basso loco?...*

Բայց ահա հայկան ազատասեր հայրենասիրութեան ձայնը հնչում է նոյնիսկ Լեօպարդի հայրենիք... Համաեւրոպական յեղափոխութեան հզօր արձագանքը հասնում է վենետիկ, փոթորկում է Ս. Ղազարի չաշխարհիկ անդորրութիւնը և մենաւոր խուցերից դուրս է կոչում երիտասարդ արեղային — ամենից զգայուն և ամենից բանաստեղծ — որ սկսում է անհանգիստ ականջ դնել Արևմուտքից ու Հիւսիսից տեղացող բամբիւններին և ապա բանաստեղծական ու ռազմական մի վսեմ յափշտակութեան մէջ առնում է բնարը, ուղղում իր վեհափառ և բոցափառ նայւածքը դէպի հեռու Արևելք, դէպի ստրուկ, բազմաչարչար հայրենիքը և երգում.

ԼՇ, «Թափեաց, ոթափեաց աղէ զարթիր,
յուշ, յուշ, քեզ Հայաստան,

»որ ժողովուրդը ի վեր ի վեր ելցեն, իցցես գու վայրիվայր նորա տիրարը ազատացեալը, դու հէք ծառայ, սորուկ, գերի, Աշխարհ ամեն հրճւեալ, դու յանմընիթար համակեալ սուզ **)...

Հայր Ալիշանն էր, հայոց սիրեցեալ Կահապետը:

Ապստամբութեան ալիքը տարածւում է դէպի հարաւ, ողողում է Խալիխան, սպառնում է Վենետիկին... Ռումբերը որոտում են և մարտի գոռ աղաղակը թնդացնում է հինաւուրց հանրապետութեան շքեղ ապարանքները Հայր Ալիշան ականատես է այդ բոլորին, նրա դիւրավառ սիրար ցնցում է և հրգեհում, նա փչում է իր սրինգը և հնչեցնում իր աննման ռազմերգի որոտընդոստ բոմբիւնները (1849 թ.)...

Հապ' օ՞ն ի զէն, գունդագունդ
Հեռեալ ի պար թունդ ի թունդ
Ի զէն ի վրէժ օ՞ն անդր յառաջ
Ի զէն ի վրէժ, մի ձախ մի յաջ. . . .

Հայաստանի անմիթար զաւակի վշտարեկ կուրծըն է, որ գոռում է, մոնչում և գունդագունդ ի զէն, ի վրէժ հրաւիրում ոհհայրենավրէժ հայկագունները^ա, ոարի արանց մանկունքը^ս...

Ահա և Մեծ ու Փոքր Մասիսի յուշիչ դեմոգը (երկխոսութիւն) — մի հոյակապ յղացումն, կատարւած

նոյն վենետիկեան անցքերի ազդեցութեան ասկ, (1849 թ. մարտ 2).

Աւագ Մասիսը — գոռոզ ահեղ և յանդուգն, վառած հրաբխային, աշխարհաւեր տրամադրութեամբ. Փոքր Մասիսը — երկուս, հեգնող ու յոռեատես, միանգամայն յուսածառած Հայաստանի ապագա և յի վերաբերմամբ: Աւագ Մասիսը ինքը Ալիշանն է, ապստամբութեան գաղափարի խորհրդանիշը և նրա մոլեգին արծարծողը, որ պատրաստ է խորտակելու ամենահայուր խոշընդուները և վերագարձնելու հայրենիքին կորսւած փառքը... նա գալոց անխուսափելի ոցնցումներին գուշակն է, խորաթափանց և լաւատես մարգարէն... Փոքր Մասիսը հակայեղափոխական տրամաբանութեան մարգանն է, ստրկութեան և անշարժութեան պատգամախոսը, որ ի վերջու ընկճում է, յետ նահանջում աւագ եղաօր որոտաձայն, անդիմադրելի շանթերի առջեւ.

Ինձ մտիկ արէք, լերունք դուք հաւար,

Ես Արարատեան եմ Աւագ Մասիս
Ազնիւ ըան դամեն լերունք աշխարհիս...

Եւ ցոյց է տալիս իր գժոխային կուրծքը, սպառնում է կրակ ու բոց ժայթքել հեղեղել ամբողջ ըրջապատը, ոսասանեցնել զԱրարատն Հայոց^ա և վայ է գոռում, ով դէմ կը կանգնի...

Կրտսեր եղբայրը հեգնում է այդ ոլիմպեան յօնորատանքը, հասկացնելով, որ ամեն ինչ վերջացած է, որ Մասիսի հսկայ և չքնաղ բուրգը սոսկ մեռելութեան մի յուշարձան է...

Չեմ, չեմ այլ վառաց ու բազդի նշան,
Այլ մեռելութեան հայոց մահարձան.

Գան գընան գառնան ամիք գետերուն
Չի գառնար որդոց՝ պարծանք հայրերուն:

Աւագ Մասիսը.

Մի՛ այդպէս ասիր, Արուկ, մի՛ այդպէս.

Մի՛ թէ բան դլւագ դու լաւ կը տեսնես.

Ես իրը կը տեսնեմ բանց քեզ առաւել,

Յերեսէն Հայոց փառքն չէ կտրել:

Բայց... որո գուրսը ձիւն է, ներսը՝ պալուկ քար՝
առարկում է Սարուկը:

Ով խոր կու նայի, թող պինդ խոր մտնու...

Պատասխանում է աւագ եղբայրը և յիշեցնում է
իր հրաբխային ծագումը.

Գիտես թէ մարած է զինչ հին կանթեղ

Բայց թէ տամ բըշիկ մի բուըսուրդի դեղ՝

Յանկսկած դաշտերդ ամեն ի ման գայ,

Դու այլ հետ լերանց բողաս զինչ տրզայ...

Թէ ուզենամ նոր հանգնեմ ես սորեր,

ՅԱրագած դեսպան զրկեմ բարկ քարեր...

Ահա և ազատութեան կուրքի վերջին խորհրդաւոր
ազդարարութիւնը.

Ինձ մտիկ արէք լերունք դուք հաւար...

Երբ յետ գարերու առաջին անգամ

Ես Աւագ Մասիս ներսուց որոտամ,

*) Leopardi: All'Italia, (1818 թ.).

**) „Բանք Ալահարամայ Պահլաւունոյ” ոստանաւորից, գրւած 1848-ին, վերաբերեան յեղափոխութիւնների անմիջական աղջեցւթեան տակ:

կանչեմ ու չնչեմ, արձակեմ ծովի բաց
լասանցը ընչեմ զԱրարտան Հայոց
Այս ընի նշան հայոց աշխարհին,
թէ դայ ժամանակի, որ գան փոռքն այլ հին...

Այդպէս էր որոտում հայոց ապստամբութեան խր-
չան երգիշը: Ոչ ոք, գուցէ ոչ մէկը հայ բանաստեղծ-
ներից այնքան յուզիչ շեշտովկ չէ լացել հայրենիքի
աւերակները, նրա մարած փառքերը, և ոչ ոք այնքան
ուժով ու մոլեգնութեամբ, այնքան սուրբ, անկեղծ
ոգևորութեամբ չի հնչեցրել այդ փառքերի յաղթական
բամբը...

Աւարոյը բըլընլը՝, մեր պատմութեան գեղցիկ
դրագների երգիչը, մեր սարերի ու ձորերի ոլիմպիա-
կան սրբնահամար իր սրբազն խանգավառութեամբ
կեանք ներշնչեց այդ սարերին ու ձորերին, այդ թփե-
րին, աւերակներին և իր սրտառուչ ձայնով — մերթ
յուսահատ և լալկան, մերթ գլարթ ու մոլեգին —
լացացրեց ու ոգեսորեց սերունդներին, յոյս ու խրա-
խոյս ներշնչեց վիթխարի վլատակների հանգեպ, գուրս
կոշեց այդ վլատակներից Հայոստանի ողին, արծարծեց
հայրենիքի և ազատութեան պաշտամունքը և ձգտեց
յաղթահարել վախի, յոռետեսութեան ազգադաւ հո-
սանըր, երգելով բարձրածայն, ինընավտահ.

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Աչա գեղեցիկ գարուն քո եկել...

ինչպէս պիտի ցաւեր, կոկը ծար այդ ազնիւ, գեր-
զգայուն սիրտը 1895—96 թւականներին, երբ Զու-
լումի համայնաջնջնջ արհաւիրբում խաւարել երին ազա-
տառար ոգարունիս մարդագոյն արշալուսները...

Դառն էր, անտարակոյս, Հայոց Կահապետի յուսա-
խարութիւնը՝ Ի՞նչ արած... Հայր Ալիշանը այնուամե-
նայնիւ, չէր կարող Նզովել հայ կ ա կ ա ն ը մ բ ո ս-
տ ա ց ո ւ մ ը, որ ինքն էր կոչել այնքան խանդագին ու
պաղատագին, որ ինքն էր Նւիրագործել իր հոյաշունչ,
սթափեցուցիչ բնարով, իր գոռ մանջիւններով... Ե. Ե. Գ.
ըմբոստացումը, այնուամենայնիւ, մնում է անպարտ՝ թէ
խօզի, թէ մորի առաջ, նա մնում է ընական և բանա-
կան իր ծագման ու զարգացման մէջ, ինչպէս որ բնա-
կան էր ֆրանսիական լինծ Յեղափոխութիւնը, չնայած
Թօրեսպիկռեան Տերրորի խօլական արհաւիրներին,
արեան հսկայ շատրուաններին, հազարաւոր անմեղների
գլխատումներին և, ի վերջոյ, յաղթանակող ռէակցիոնին...

Եթէ կայ հայ յեղափոխականի մեղսակցութիւնը Հայ-
կական Զուլումի մեջ, ապա Արիշան և Խրիմեան — եր-
կուսն էլ ընդվզումի և ազատութեան հօյատիս շեփո-
րողներ — բաժանում են արդ ՝ «մեղսակցութիւնը», բա-
ժանում են ըմբռոտացման հետև և անքի պատասխա-
նաւութիւնը՝ Հայ Յեղափ. Դաշնակցութեան հետ
հնչակեան կուսակցութեան հետ, Արմենական կուսակ-
ցութեան հետ:

Եւս... կարմիքլու տեղիք չունին այդ պաշտելի դեմքերը,
Արանք կատարել են իրենց պարտքը ժողովրդային ծոռ-
ված աւալ տառապանքի ու վշտի հանդեպ, կատարել են
այն ձևով, ինչ ձեռվ թելադրել է իրենց խիզճը և հա-
մաշխարհային պատմութեան ձայնը:

Մ. ՎԱՐԱՆՅԱՆ

θ b P θ θ u

ԱՐԵՐԱԿՆԵՐԻ ԺՊԻՏԸ

(ՏԱՄԲՈՒ ՑՈՒԵՐ)

Աշնանային չքնաղ երեկոյ է, անուշ ու երազուն.
լոյսերի, գոյների, կիսաստերների մի երեկոյ, երբ մարդ
լսում է հանգչող բնութեան մեջմ հեքը և թօշնող
խոռ ու տերևի տարտամ՝ մըմունջը:

Առջևս փուլած է մի ծով հարթութիւն. Խաղդական
լեռնաշղթան և կարմիր բլուրների բյահաճ շարաններ
փակում են հորիզոնը, ուր ցոլքերի, երանգների մի
անեարածիր, բիւրածալ շղարշ՝ թրթռում է, բացում
ու կծկում, եռում ու փուլում: Ըքեղ ու բեղուն դաշտը
թափծու՝ որպէս այրի հարս, հեռուն փարում է հոռ
բիզոնին, լեռներին, բլուրներին:

Թիկունքիս Արզահան գիւղն է *), Հուրջս Տիւն-Տիւն պերեցմաններ ու աւերակներ:

բազմաթիւ աւեր եկեղեցիներ փուլած են հարթու-
թեան վրայ, որը տակաւին կանգուն՝ իր մի հատիկ
կամարին յուսահաս ճիգով յենած՝ վերահաս ու ան-
խուսափելի անկումի սարսափը ճակատին, որը ընկած մի
կողքի, պարսւած հսկայի պէս և գլուխը վար դրած
հողերի մէջ, այլ ևս երբեք չբարձրացնելու համար,
ուրիշները անձև, այլանդակ բարսկոյա, շարունակում
են սակայն երկնքի ճակատին ցցել մի սիւն, պատի մի
կտոր, որպէս ցասումի կարկառուն բազուկներ. կան և
այնպիսիները, որոնք իսպառ հողին հաւասարւած, տրու-
ւում, փոշիանում ու անհետանում են ուժեղ հովերի
անողորմ շնչով:

Արւեստի, զգացմունքի, գերազայն հաւատի բոլոր այս
արտասևելի բեկորները լուելեայն խոկում են իրենց վի-
րաւոր, իրենց արիւնուա ու ծանր խոհը:

Եւ աւեր եկեղեցիների շուրջը, Նրանց մխացող ծուցում, Նրանց թեւերի տակ, փուտծ են ցաք ու ցրիւ բազմաթիւ շիրինեներ, նօսր ու խզուկ խոտեր, նիշար, դեղնած ծիլեր փարել են մամռապատ բարերին և կամացուկ սլյուտմ են երեկոյեան հովի թեթև շնչով:

Առջևս կանգնած է ծերունի Նախապանը, այս տրասում
թուածն, իր երկար գաւազանին յենած՝ և յամառաբար

* Բարեկարգի շրջանում Տրապիզոն տանալ ճամբառ վրայ:

նայում է գետին, իր ոտների տակ ժամեր է ինչ միասին ենք և նա միշտ այդպէս է: Վեր է նայում միայն այն ժամանակ, երբ պատասխանում է հարցիս, ապա կրկին ծնօտը յենում է աշ ձեռքի դաստիկին և երկուսը միասին իր գաւազանին, ու մնում է լուս, աշքերը մի կետի յառած:

— Ի՞նչ ես փնտրում ոտքերիդ տակ, այդ ծերուկի նա գլուխը բարձրացրեց, թաւ յօնքերի տակից վրաս թարթեց խորը աշքերը, ու հակիրճ ձեռվ տաց.

— Հե՞տ:

Ու կրկին նրա ալեզարդ գլուխը, թաւ ձերմակ միւրուքն իջան գաւազանին:

Առաջ անցար գեպի մի նորակառոյց շէնք, որի պերճ զանգւածը, ինչպէս մի մեղմանուշ ժպիտ փթթում է այս աւերակների ու գերեզմանների վրայ:

— Դպրոց է, ասաց Թումօն, երկու տարի կայ ամենքս ել բար ու կիր կը կրենք... խերով գործ ա, ինչ կայ որ, ամա կասեմ փերիշան կէնեն անիրաւները... Կը տեսնաս էսա ժամեր, բասն երկու ժամ կայ, մեր պապերն էլ բրտինք են թափեր, բար ու կիր կը ել, Աստծու տռւն շիներ, աղօթք արեր... էլման փերիշան, մեր փոթանը համա փերիշան, ֆարդայ չկայ... էսա երկիր ֆարդայ չունի:

— Թումօ, չե՞ հիմա ազատութիւն է:

Պատասխանի փոխարէն այս անգամ Թումօն լուս արդահատանըով նայեց ինձ, ինչպէս նայում են անյօյ միամիտներին, ու գլուխն օրորեց:

— Ա՞ն, խայեր, ասաց նա բիչ յետոյ, ու ես չհասկացայ, թէ ի՞նչ եր այդ բացականշութեան իմաստը Արտանը մի աւերակ եկեղեցի:

— Առոր Սարգիսն է, ասաց Թումօն այնպիսի ձեռվ, ասես ծանօթացնում էր ինձ առջևս կանգնած մի կենդանի մարդու հետ:

Աւթանկիւնանի մի հրաշակերտ է այդ Ա. Ասրդիսը. ժամանակն ու բարբարոսները կրծուել են գեղարւեստի այդ աննման կոթողը, բայց էլի ինչ որ մնացել է, վշտախառն ու անհօն հիացմունքի աղբիւր է:

Մեր ոտնաձայներից ազաւնիները խրտնած երամով խոյս տէին և անցան գեպի միւս աւերակները:

— Ազաւնի շատ կայ... ասաց Թումօն, բուեր էլ կան... Գիշերը կը վայեն, լրացրեց նա թաւ ձայնով ու ծնոտը դրեց գաւազանին:

Արել մայր մտաւ, երեկոյեան մշուշն իջաւ, բայց ես ու Թումօն գեռ եկեղեցում ենք: Աւեր, լայն լուսամուտից երկում են Խալդական լեռնաշղթայի հսկայ սուերները և նրանց ոտների տակ կարմիր բլուրները, որոնք կամացուկ մաշում, լուծւում են կիսաստերներ, թթվառուն լոյսեր խաղում են, իջնում, բարձրանում, որպէս անհանգիստ, հալածական ոգիներ: Ու ականջիս հնչում են մոայլ ծերունու չարագուշակ խօսքերը.

Է լողում տարտամ, վարանուս ճամբրոդի պէս, որ իր մոլար ճամբան է փնտրում անհունի մէջ:

Ընկնող ցորենների խշոցը և մանգաղի մեղմ զրնդոցը մեզ է հասնում հօվի թեկերով և գիւղացիք գեռ հընձում են, գեռ վաստակում են...

Աւերակների շուրջն իշխող այդ աշխատանքը, ու կետանք ու կենդանութիւնից, յօյս ու եռանգից է խօսում, պարարիչ խոհերով համակում է իմ հոգին և զրնդոցը գերանգու, և խշոցը խուրձերի, և մեղմ զրոյցը հնձուրների, բոլորը միասին մի իմաստ են ստանում, որ հեգնում է մահը, աւերածը, յուսաբեկութիւնը:

— Զարկ, զարկ այդ գերանգին, ո՞վ բրանաջան վաստակաւոր... Թումօն, հունձն աղէ՛կ է այս տարի:

Թումօն գլուխը բարձրացրեց, նայեց հեռուն:

— Ե՞ս, աղէ՛կ գէշ, մէկ չէ՞՝ ասաց նա, գատողն ո՞վ, ուտողն ո՞վ. ու ծեր գլուխն այս անգամ զայրոյթով իջաւ գաւազանին: Էլ չէի տեսնում գէմբը, բայց խաւարի մէկ դեռ լսում էր նրա ձայնը: Թումօն խօսում էր ինք իրան, կամացուել:

— Համա փերիշան ենք... Բոնաւորի օրով փերիշան, ասին ազատութիւն էկաւ... էլի փերիշան... Ե՞ս, Փարդայ չկայ...

Մուայլ անհամբոյր ծերուկ... նրա այդ թաւ ձայնը խաւար, աւեր եկեղեցու մէջ, ինչպէս գերեզմանից՝ ձընշում էր ինձ:

Դուրս եկայ:

Արեելքում բանձրացաւ լուսինը. և նրա գունաց ողերի տակ աւերակների երկարուն ստերները սգացող եղերամայրերի պէս իջան, գերեզմանների վրա փուեցնի: ու լուսթիւնը դարձաւ այնպէս խորունկ, այնպէս խոհուն: հօվի է հնձենծում աւերակիների մէջ, թէ՛ մէկը իրօք լալիս է. շուրջն նայեցի... միայն Թումօն էր առաջս միշտ իր համա գաւազանին յենած ու աւերակները լուսնի պաղ ցոլքերով սքօղւած՝ որպէս ձերմակ պատանների մէջ կարծես դողդողում են, գալարում և խորհրդաւոր եղերամայրերը շարունակում են փարել հինաւուրց շիրիմներին: Հեռուն, լայնարձակ դաշտում գունատ կիսաստերներ, թթվառուն լոյսեր խաղում են, իջնում, բարձրանում, որպէս անհանգիստ, հալածական ոգիներ: Ու ականջիս հնչում են մոայլ ծերունու չարագուշակ խօսքերը.

— Փայդայ չկայ, փերիշան կէնեն...

Ծինարար, բայց ընկճած, պարտած ցեղի կոկիծի ճիշներն է այն, որ բարձրանում է աւերակներից, գերեզմաններից:

Կամացու մի բարի վրայ ու անձնատուր իմ խոհերին՝ նայում էի հեռուն: Թումօն կրկին մնաց կանգնած, կրկին նայում էր ոտների տակ ու ասես խպատ մոռացած մի ներկայութիւնը, խօսում էր ինըն իրան:

— Ելի գիշեր եր, ելի լուսընկայ, ելի հով ու զով վախ խայեր, աշխատանքից դարձանք, ելի արտու հունձ կար, ցանք ու վաստակ, դարձանք ու եսա սև փոսը փորեցինք...

Թումօն գլուխը բարձրացրեց ու գաւաղանով ուժ գնորդն հարւածեց գետնին, ուր սովորական մակերեսով թից մի փոքր ցածր, բաւական ընդարձակ բառակուսի ծածկւած եր թանձր խոտերով.

— Հա, աշխատանքից դարձանք, ելի եսա իրիկւան պէս խորոտ իրիկուն եր, չորս գեհէն վրաներս էկան մեր հարևանները՝ թիւրք, չերքէզ... Ու հարիւր տասներեք տղամարդ ընկան ես վերան գեղից համա եսա փոսի մէջ պարկած են. Հարիւր տասներեք տղամարդ, վախ, վախ... հանգիստ ձեզ, հանգիստ ձեզ խեղճ ջահիլ-ջիւաններ...

Ոտքի ելայ, առաջացայ գէպի այդ սև վիհը, ուր կանգնած էր Թումօն, գլուխը բաց, ձերմտկ մազերը հովին տւած և լուսնի ցոլքերի տակ գունատ ու խորհրդաւոր, որպէս ստւեր ու մէջիւ սրբում էր աշքերը...

— Կ'ըսեմ Փայդա չկայ, փէրիշան կ'էնեն... աշխատանքից Փայդայ չկայ եսա վերան աշխարքի մէջ!

Սասանւած էի...

Տասնեվեց տարի առաջ կառարւած Մեծ Խղեռնի մի արիւնոտ դրւագն էր այս, որ անողորմ, գառնացած ծերունին, որպէս ջախջախիչ իաստ իր յուսաբեկութեան՝ առջևս հանեցի Ու ինքս էլ Թումօնի պէս ոտներիս տակն էի նայում, այս ազագուն, չորացած խոտերին, որոնք ծածկում էին այնքան մատազ կետները վաղաժամ չորացած։ Ատներիս տակ հողն էր եռում ու խոտերի ու բամու շըռնջն ու սլսոցը հոգուս մէջ հնչում էր, որպէս կենդանի զրոյց, մի սև հերիաթ, որ ասես ոչ սկիզբ ունի և ոչ վախեան։

Գլուխս բարձրացրի, Թումօն էլ կողքս չեր, մերժ ծածկւելով ստւերների մէջ և մերժ լուսնի շողերով ողողուն, նա երերալով գնում էր գէպի գիւղը, ապա իսպառ ծածկւեց։

Հեռուն, բաց հարթութիւնը դողդով ասազերի տակ՝ լուսնի արծաթ մշուշի մէջ հեռում էր մեղմիւ, աւերակները սրթսրթում էին իրենց լուսացնուղ ձերմտկ պատաների մէջ, առջեխս մահացուք փոսը լուս միում էր ինչպէս մի հսկայական սև վերք մալր երկրի կրծքին, և քիչ անդին դպրոցի չենքն էր բարձրացնում իր ապիւտակ գանգւածը, որպէս հմայիչ ժպիտ։

Իեանքի, լոյսի ժպիտը, որ իշխում էր մահւան աւերածի, յուսաբեկութեան վրայ

— Նորից նստեցի մի բարի վրայ, գլուխս ձեռքերիս մէջ առայ և մեր պատմութիւնը, մեր ցաւագին պատմութիւնը իր բոլոր արիւնոտ յեղյեղումներով, որպէս յոգնած վիրաւոր ուղտերի կարաւան, եկաւ անցաւ աչքիս առաջից։ Այս աւերակները, այս մահացնչ փոսը, ուր հա-

րիւր տասներեք մատազ կեանքեր են հանգչում, այս հոյակապ դպրոցն իր ժպտով և այն դժբախտ թումոն իր մահագուշակ ովերիշանով՝ մեր սմբողջ պատմութիւնը չէ, մեր դաժան, մեր անողորմ պատմութիւնը

Յամառ աշխատանք, ստեղծագործելու, կերտելու անսպառ եռանդ, մաքի, արւեստի սրանչելի խոյանքներ և յետոյ... անսկնկայ, վայրագ աւերած բարբարուների ձեռքով, ողբ, յուսաբեկութիւն, գերեզմաններ, մի ամբողջ աշխարհ՝ քար ու բանդ, մի սմբողջ ազգ՝ բունաւեր, փէրիշան... ու կրկին վերաշնութիւն, կրկին յամառ ու անդուր աշխատանք, և՛ մուրճի շառաչ, և՛ մանդազի զրնոց, և՛ զիլ երզը հոտազի, և՛ հօրօվելը շինականի... մինչև մի նոր աւերած...

Եւ այսպէս դարե՛ր, դարե՛ր, դարե՛ր...

Ո՛չ, ծերո՛ւկ, գու անողորմ ես, մի բամիր մեծ, պարբիչ յոյսի վրայ քո գառնացած, քո տանջաւած հոգութոյնը փէրիշան կ'անեն, էլի կը շինենք, կը խորակեն, կրկին կը բարձրացնենք, մինչև որ բարբարոս, արիւնածարաւ կատաղութիւնը ինք զինքը լափի ու չքանայ, մինչև որ մոլեզին վայրագութիւնը իր սեփական միուր բզիտի ու ընկնի լէշացած, մինչև որ յաղթանակի արդարութիւնն ու իրաւունքը։

Եւ կը յաղթանակի, որովհետեւ անիրաւութիւնն ինքն իր մէջ է կրում իր մահը, որովհետեւ քանդումը, աւերը գերեզման է յափշտակիշների ու աւերիշների, ջարդաբարների:

Հնձւոր տղամարդիկ ու կանալը դանդաղ ու լուս շարանով եկան ու անցան առաջից նրանց գերանդիներն ու մանդազները փայլփլում էին լուսնի ցոլքերի տակ, կայծկլտում ու ժպտում աստղերին, երկնելին...

Ու յարգանքի, պաշտամունքի մի հզօր զգացմունք համակում է հոգիս գէպի այս լուս վաստակաւորները, որոնք չգիտեն, չեն էլ գիտակցում, որ իրենց անյայա ու համբ ճիգերով լուելեայն զարդարում են շինարար, զգաստ ցեղի ամենէն գսեմ աւանդութիւնները, աշխատանքի, ստեղծագործութեան զիւցազներգութիւնը։

Ո՛վ քրտնաթոր, վաստակաւոր ժողովուրդ, որ հարիւր տասներեք խոյինողւած զաւակներիդ վիշտը հոգումդ և արդար ցասումն տամաներիդ տակ փշրելով, գեռ գիտես ցանել, հնձել վաստակել, գիտես բարձրացնել այս իսկ աւերակների մէջ լուսոյ հսկայ այս կառուցւածքը... ահ, գու պիտի կարողանաս նաև յաղթանակի, և՛ բարբարոս, արիւնածարն բռնութեան ողնաշարը խորտակել։

Կերտիր, կերտիր, ո՛վ քրտնաթոր ժողովուրդ ու ծառացիր նաև, որ քո ստեղծագործական ճիգերի հոյակապ կառուցւածքը փէրիշան չ'անեն բարբարուները։

Տ Ա Ր Ա Գ Ի Բ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՅՈՅՈՒԵՐ ԵՒ ՅՈՒՍՈՒԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՎԱՍՏԱՆԸ իր ձեռքն է առնում հայկական գատը՝, ոսուս կառավարութիւնը պիտի զնէ հայոց հարցը Լոնգօնի դեսպանաժողովում, պիտի պահանջէ լայն ռէֆօրմիներ, ինքնավարութիւն, ավանդիստացում... Մի ամսից ի վեր պաշտօնական ու կիսապաշտօն օրգաններ, կաթողիկոսական պատի իրակներ և մասնաւոր անհատներ տարածում էին եռանդով այդ լուրերը... Ամենէն սկեպտիկներն անգամ ստիպւած էին մի վայրկեան հաւատալ ու մտածել, թէ մի՞ գուցէ յիրաւի նոր կուրու է սկսում հայոց հարցի նկատմամբ Պետքը բռորդեան ըրչաններում, մի՞ գուցէ, վերջապէս, Առուսաստանի վարիչները համոզւել են, որ ժամանակ է դադարեցնել հայկահայկական բաղաբականութիւնը և փոխանակ արգելք լինելու թիւքահայոց ռէֆօրմիների իրագործման—ինչպէս որ եղել լուրանօվինան օրերից ի վեր—Նպաստել այդ չարատանջ հարցի լուծման, չը գրգուել երեք միլիոն հայ ժողովուրդը, որ ամեն անդ համարանում է ուստական կուլտուրայի ու առաջնաշաղութեան դրօշովկակիր...

Բայց ահա արդէն ծայր է տալիս յաւախարութիւնը և նոյն ուստական պաշտօնական անձերն ու օրգանները, հայերին հանգստացնելով, համբերութեան յորդորներ տալով հանդերձ շեշտում են, որ Լոնգօնի դեսպանաժողովի օրոկարգի մէջ անդ չկատ հայկական խնդրի համար...

Դարձեալ ուժեցվելու... Ահացին աղմուկ, թմրկահարութիւնը խոստումներ ու խրախոյններ, կաթողիկոսական յայտնի, ցուցարար պատրիարքութիւններ, յաշա ամբողջ Առուսաստանի ու Եւրոպայի—և գարձեալ... լեռը մուկ ծնեց: Հայաստանը սոսկ կարմիր խրուիլա՞կ էր, որ ուետերբուրգը ցուցադրում էր Առաքիային ու Գերմանիային մղելու համար վերջիններիս դէպի զիջող բաղաբականութիւն բարկանեան սլավոնների վերաբերմամբ... թէ գուցէ առ ոճրագիրներ կան...

Այսպէս թէ այնպէս, դա մի նոր ու գառն փորձութիւն էր մեր մի հայրենից հայրենակիցների համար—մի պաշ ջրցան...

Յուստաբարութիւնը աւելի ևս ծանր ու ձնշող հանդամանը է առնում՝ ըիչ առաջ հրապարակ նետած սենսատիօն տեղեկութեամբ, որ բառ առ բառ ծանուցանում էր

Առուս կառավարութիւնը դիսաւորութիւն ունի մոցնելու պիտական դումայի մէջ առաջարկ վերաբններ Պօլունիւն... այն մորով որ Հայոց Ամենային գործունեւթիւնը համաձայնեցի պիտական իշխանութեան պահանջների հետ և սամհիների հետ կոպան ևն Առուսաստանի հայ ժողովրդի հազերը մասնութեամբ հայեց Ալիքին հարիւրաւոր զօրքը, ոստիկան ու յատուկ ըննիւններ ուղարկեց Կառկառ՝ քննութեան համար բայց... բնութիւնն ինքը արգելք եղաւ ճամբարական դոցւած են Առաջանան չի կառող այժմ

կարիքներին գոհացում տւով շատ հաստատութիւններ, ինչպէս գպրոցը, բնարական սիստեմը, ուստի պարզ է, որ Պօլունիւնի վերաբննութեան խնդիրը մի առանձին կարիքութիւն է առանում հայերի համար...

ՈՒՍՈՒԱՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Աղջունելի են Եւրոպայի մեր հայրենակից ուստանողները, որ կամեցան արձագանք տալ համազգային տրամադրութեան և հաւաքւեցին — թէև սահմանափակ թւով — խորհելու իրենց ձեռք առնելիք միջոցները, վայրկեանի պահանջների համեմատ Խորհրդագովովը տեղի ունեցաւ Լօգանի մէջ մասնակցութեամբ Պարիզի, Կանսիի, Ֆրնէլի և Լօզանի պատգամաւորների Խորհրդագութիւնը առեց երկու որ, ընկերական լիակատար համերաշխատ թեան մէջ:

Ինդունած որոշումները բազմաթիւ են. ահա նրանցից մի բանիսը.

1. Պրօպագանդ սնել արևմտեան մամուլի մէջ հայկական խնդիրն արձարծող յօդ։ ածներով։

2. Աշխատել կազմովի երազելու միթինկներու ու գասահոսութիւնները ոլլ և այլ քաղաքներուն։

3. Պարտագրել իրաքանչիւր քաղաքի ուստանողական միութիւն իր միջոցներով արածելու Պարիզեան ֆրանսերէն թերթը։

4. Զեռնարկել ուսանողութեան ու գաղութների մէջ դրամի հանդանակութեան և յատկացներ նպաստեները թիւքահայ ժողովրդի ինքնապաշտպանութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐՃԱՆԴԱԿ

Բնդուս մի մի նուի մեղեկորդներ խթանութեան մէջ ուսանուած միւրչին նուակներից։

Պան, գեկտեմբ. 16

Դրանք տպաւորութեան առկ վերագարձան մեր հազար գիւղացները, որ Առաքայէլի սպանութիւնից յետոյ թափել էին քաղաք և գիմումն արել կուսակալին դրական ոչ մի արդիւնք այդ դիմումներից։ Զգուած ու վըէժով լցւած, տուն դարձան և արիւնը արիւնով լւացին, այն էլ իրենց ձեռքով... Խմացաք արդէն, որ Առաքալէլի սպանիչներէն գլխաւորը, Հաջի Եւղուր, իր որդին Առաջ, մէկ սոսիկան և չորս ուրիշներ սպանւել են հայերի ձեռքով, Խրոխտենց զիջի մօտերը լուսավարութիւնը խսկոյն խուճապ հանեց — այն կոռապարութիւնը, որ մատը մատին չխփեց Առաքայէլի դահիճներին պատժելու համար.. Ալիքին հարիւրաւոր զօրքը, ոստիկան ու յատուկ ըննիւններ ուղարկեց Կառկառ՝ քննութեան համար բայց... բնութիւնն ինքը արգելք եղաւ ճամբարական դոցւած են Առաջանան չի կառող այժմ

մասել կառագատի խորքերը Հայերու կողմից բան չի եղել, ամբողջ Խորհրդանության գիւղը փախել էր մատակայ գիւղություրը Հետեւանքը շուտով կը պարզէի:

Դ. Եղբի ապաւորութիւնը շատ լաւ է հայերի մէջ և շատ ծանր՝ կառագարութեան վրայ:

Կառագարութիւնը, մասնաւորապէս վալին, որ մի վատ քիւրդ է, սկսել է պրօվոկատիսներու իրը թէ հայերի մէջ կան ուսւական գործակալներ...

Ա—Մ

Լորդում, 1) գեկտ.

Հայաբնակ վայրերի մէջ... տագնապը արձակել է բոլոր սանձերը ժողովրդի տականքները, թալանչի խուժակարները մի յարժար առիթի են սպասում՝ մասսային ջարդեր սարքելու... Առ այժմ Խոշոր, արտակարդ ոչինչ չկայ: Առում եմ արտակարդ, որովհետեւ անհատական սպանութիւնները, մասնակի կողովուան ու թալանը այս քամբախտ երկրի համար վաղուց ի վեր սովորական թիւների շարքն են անցել և մարդիկ կարծես հաշտել են դրանց հետ...

Որ բրդերը չափազանց երես են առել Առաջուրականում, զա ճիշտ է: Նկատելի են քրդական չարժման նախանշաններ բացարձակապէս ըմբռուանում են կառագարութեան դէմ: Լուր կայ, թէ մի գաղտնի ձեռք զեկավարում է այդ շարժումը... Քրդական վտանգը՝ քանի գնում—լայն ծաւալ է ընդունում: Թիւրք կառագարութիւնը—վախինց է արդեօր—ի տեղի զապելու, կօկէտութիւն է անում քրդերի հետ, ամեն կերպ սիրաշահում է...

Աւելացրեք և այն՝ որ Թիւրք խուժանը ևս սկսում է գոգոսումի վտանգաւոր նշաններ ցոյց տալ, Թիւրքիոյ պարտութեան լուրերի ազդեցութեան տակ...

Առ այժմ կրքերը զսպւած են երեւում: Ի՞նչ կը լինի վաղը... գուշակել գժւար է: Կարնոյ դաշտի ժողովուրդն ևս չափազանց անհանգիստ է: 1895-ի ջարդի մղաւանչը արսօր էլ ճնշել, պաշարել է հայ գիւղացու միաբը թիւրք գիւղերի մէջ նկատուած են աշխաթի ագիտատօրներ...

Ֆ—Ց

Ակրատուն, 5 գեկտ.

Կոր թողի երկիրը... Անիշխանութիւնը կատարեալ է Ապրում ենք չափազանց կարեւոր մի ժամանակաշրջանում. 1908-ի Թիւրքական յեղափոխութիւնից ի վեր, սա ամենածանրակշիռ մօմէնտն է, մասնաւորապէս հայերիս համար... Հայկական գաւառների մէջ թալանն ու սպանութիւնը սիստեմատիկ բնոյթ ունին: Քրդերը այլ ևս ոչ մի կարևորութիւն չեն տալիս իշխանութեանը, նրանց յանդգնութիւնը հասել է այսեղ որ հայերի վրայ ձեռք են բարձրացնում անգամ և առաջ առաջ գաւառի մէջ, որ հայ տարրը նոյնիսկ հին ու-

ժիմի ատեն ուժեղ է եղել և զրեթէ ազատ բռնութիւններից: 16 Խոշոր հայ գիւղերի գիւղաց կան ընդամենը 4—5 բրդական գիւղեր:

Առ շնչիթիսեան ըրջանի գետերը նախանշան են քիւրդ-հայկական գուղոց ընդհարումի... Գորնան կարող է նա պայմանել:

Ի՞նչ պիտի լինի երկրի վիճակը այսուհետեւ... Այս հարցումը յաձախ ենք տալիս մեզ Ասհմանադրութեան առաջին ըրջանում չափազանց լաւագուստ եղանք, և մենք կանգնած ենք համաթիւրբական յեղափոխութեան ու վերածնութեան տեսակէտի վրայ: Տարաբախտաբար, մեր անկեղծ ոգեսութիւնների յաջորդեց դառնայի յուսախարութիւնները մէջ մեր ժողովուրդը սկսեց առաջադիմել, բարգաւաճել. բայց միւս կողմից, եկանք այն տիսուր համոզաւմին, որ երկրի մէջ չկան համապատասխան տարրեր՝ օրէնքի ոգով շարժւելու, արդարութիւնը դատարանի, օրէնքի առաջ պաշտպանելու:

Ամբողջ պաշտօնէութիւնը, սկսած ամենապարզ զապթիէից մինչև միւդիրը, գայմագամը վարակւած են կողմանակալութեան ու կաշառակերութեան ախտով և կատարելապէս անգէտ են իրենց պաշտօնի պահանջներին: Ամբողջ կառավարական մերանիզմը վչացած, քայլաւած, անընդունակ է վերանորոգչական աշխատանքի: Այլ բան էր, թէ տեղական ապահենութօնացմանը, հայերի լայն մասնակցութեամբ գործի ձեռնարկէին: Գժբախտաբար, այդ բանը ներկայում անհնարին է: Ապասէլ այս վիճակի մէջ նորեն 10—20 տարի, որպէս զի նոր տարրեր տուած գան (այն էլ՝ պայմանով, որ Թիւրքիան մեայ սահմանադրական) — թերեւս կարելի էր մի բան յուսում բայց գժւար թէ այդքան տարիներ անցնին առանց մեծ արիւնչեղութիւնների...

Թուում է թէ նոյնիսկ թիւրք ցեղի անմիջական շահը կը պահանջէ, որ եւրոպական միջամտութիւն լինի և լրոպայի միջոցով առաջ տարուի երկրի վերանորոգման գործը, մինչև նոր, հասուն տարրեր ի վիճակի յայտնին՝ իրենց ձեռքն առնելու զեկավարութիւնը Բայց քանի որ թիւրքերը, նոյնիսկ ներկատարգ կոչւածները անկարող են այդպիսի համարձակ ժեստ անել — մեզ կը մնայ մեր գլխի ճարը տեսնելու Քիւրդը պիտի շարունակէ զարնել: Հարկ է պաշտպանելու Հարկ է հոգալ — ազգովին հոգալ — պաշտպանութեան միջոցներ...

Ա—Ա

۱۰۹

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

"Դրաշակ"ի 1912 տարւայ վերջին թիւը ուղարկելու
առթիւ՝ կը յիշեցնենք մեր գործակալ ընկերներուն և
անհատ բաժանորդներուն.

- 1) Գործակալները պէտք է յայտնեն, թէ քանի՞ օրինակ զրկելու է իրենց շրջանին համար:
 - 2) Անհատ բաժնութեանքները պէտք է չուտով նորոգեն իրենց բաժնութեագրութեանը, հակառակ պարագային կ'ըստիպինք դադրեցնել թիրթի առաքումը:
 - 3) Հասցեները գրել որոշ և ընթեռնելի, Հասցեի փոփոխութիւնը առանց վճարի է:
 - 4) Տարեկան բաժնեգինն է 5 ֆրանկ կ-ն ի կ:

Zwangk Réd. du „DROSCHAK“, Genève (Suisse)

ԴՐԱԿԱԿԻ

2018 RELEASE UNDER E.O. 14176

W b 'C E q f P q E S h b f 'b b P

Բարին, Բառին և Գլուխայի կուփ մէզայիներ (եւս խթանը), Թուրու, Թումոն, Թումանի մատական խումբը, Խոն, Կոյճակ, „Ապահով” ձիւու խումբ, Կորիս ուժանակի զնեւը, Խոր, Կուռուցած նախատիներ, Հույս, Ասօ, Սամարիոյ ներսուներ, Սոխ, Աղոք-Աղիոր, Աղըման, Վազգեն, Վազգենի մատական խումբը, Վահանին, Տարոնի Աղիոր և իր կուփները, Քիչսանու:

Հայոց 59 տասնիսին
Քեզի Ազգային, Հայկական ուղարման (Խոհեմ պիտույք):

• B. B.

Արօ, Աշորօ, Աշտավիրանական Արօ, Բարիքն, Գլուց-Հուտե՛
Քնի Են, Գուգենի, Եղիսաբէդի, Երկուր, Թարու, Թուման, Խան, Խան
Պարսկակ, Խչչ (պարսկացի), Խոյնի, Խոր, Խոր (Աղոխնենի)
Խորենան, Խէտաշի, Հռոյր, Խայլուրի Վելոսունա, Միասնան
Նիկո (պարսկացի), Զուր, Պէտրոս, Արեգակնարիւ, Արեգակնան
Սուրեն, Սահմանան, Գաղղթ, Կանան, Տարօնի : Ոխուր և իւ իւ
զուկենը, Եփսոսափոր, Ֆինանժիս-Կոմիկո:

One hundred thirty-three 3' diameter 6' 108 hsp' 5 dc.

5. Ճամփել պրօքտուրացիոն չի թիցածից ու պրակտիկու և ու բաց համակերպությունուց

POUR LES PEUPLES D'ORIENT

Organe des Revendication Arménien

Paraisson le 10 et le 25 de chaque mois

Directeurs:

Francis de Pressensé et Victor Bérard.

Secrétaire de la Rédaction:

Pour les Peuples d'Orient αριστού τη Σρανταράκη. Επιμέλεια της Εθνικής Ανθολογίας, Φρανσεσκόπουλος τη μεταφράστηκεν το ελληνικόν γένος.

